| <p>12.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հնչյունաբանություն: Ձայնավորների և բաղաձայնների դասակարգումը: Արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: Թեմա 2. Բառագիտություն. բառիմաստ, մենիմաստ և բազմիմաստ բառեր: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները: Հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ: Դարձվածքներ: Թեմա 3. Բառակազմություն, բառի ձևաբանական կազմը /արմատներ, ածանցներ, վերջավորություններ, նրանց ուղղագրությունը/: Թեմա 4. Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները /բառ, ձևույթ/: Խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: Գոյական անուն, քերականական կարգերը, գոյականի ուղղագրությունը: Ածական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թվական անուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Դերանուն, քերականական կարգերը, ուղղագրությունը: Բայ, քերականական կարգերը, ուղղագրությունը:</p> | | |
| <p>14.Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004 2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Ходжумян Б.С.. Ереван, изд-во ЕГУ, 2015г. 3. Учебные пособия по специальности. | | |

| | | |
|---|-----------------------|-----------------|
| 1.0001/B05 | 2.Ֆիզդաստիարակություն | 3.0 ECTS կրեդիտ |
| 4.0 ժամ/շաբ. | 5.0/0/0 | |
| 6.3-րդ, 4-րդ կիսամյակներ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է հաշվի առնելով հասարակության և անհատի զարգացման հետաքրքրություններն ու շահերը, մարզի բնակլիմայական պայմանները ձևավորել</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողների ֆիզիկական զարգացման, բարոյական և կամային հատկանիշները, կարգապահություն, աշխատասիրություն, սոցիալական ակտիվ դիրքորոշում, • ուսանողների մոտ ձևավորել ֆիզիկական ինքնակատարելագործման և | | |

ինքնադաստիարակման արժեքային համակարգ, սերմանել ֆիզիկական կուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու պահանջմունք,

- ուսանողների մոտ ձևավորել առողջությունը պահպանելու և ամրապնդելու, հոգեկան կայունությունը զարգացնելու, հոգեֆիզիկական ընդունակություններն ու անձի յուրահասակությունները մշակելու գործնական կարողություններ ու հմտություններ:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. ներկայացնելու մասսայական սպորտի, բարձր նվաճումների սպորտի և ուսանողական սպորտի առանձնահատկությունները, թվարկել սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման փուլերը,
2. ներկայացնելու ուսանողական սպորտային մրցումների համակարգի կառուցվածքը, ունիվերսիադաների և օլիմպիական խաղերի տարբերությունները, թվարկել նրանց դաստիարակչական հատկությունները, ներկայացնել տեղեկություններ օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների վերաբերյալ,
3. հիմնավորելու կոնկրետ սպորտաձևի ընտրումը կանոնավոր պարապմունքների համար, թվարկել հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համակարգերի կիրառման բնութագրերը:
4. թվարկելու տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները, մեկնաբանել անհատի վրա դրանց ներգործության բնութագրերը,
5. ներկայացնելու արտադրական ֆիզիկական կուլտուրայի, արտադրական մարմնամարզության առանձնահատկությունները և մեկնաբանել նրանց անհրաժեշտությունը մասնագիտական գործունեության մեջ:

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. պահպանելու ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները,
2. սպորտով կանոնավոր պարապելու դեպքում իրականացնելու օրգանիզմի վիճակի ինքնահսկողություն կիրառելով նրա հիմնական մեթոդները և ցուցանիշները, վարել ինքնավերահսկման օրագիր,
3. ցուցաբերելու տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում մարզախաղերի ժամանակ,
4. կատարելու շարժողական գործողություններ ֆիզիկական վարժությունների կատարման մատուցված մեթոդներով և ցուցաբերել նորմատիվներին համապատասխան արդյունքներ:

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. դասախոսի անմիջական հսկողությամբ ուսանողների խմբում իրականացնելու թեմատիկ հանձնարակականի փոխադարձ վերահսկողություն
2. աջակցելու ընկերներին թեմատիկ շարժողական գործողությունների, հնարքների կատարման ժամանակ, ներկայացնել իր կարծիքը ընկերների ֆիզիկական պատրաստվածության վերաբերյալ,
3. վերլուծելու դասախոսի կողմից իրեն և խմբին տրված անհատական և խմբային հանձնարարականների իրականացման արդյունքները,
4. կազմակերպելու մասսայական և առողջարարական ֆիզկուլտուրայի պարապմունքներ, սպորտային միջոցառումներ կուրսում, ֆակուլտետում, բուհում և նրա շրջանակներից դուրս,
5. կողմնորոշվելու տարբեր իրավիճակներում, ցուցաբերել առաջին բուժօգնություն վնասվածքների դեպքում

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. վերահսկողական ուսումնական պարապմունքներ.

- տեսական դասեր դասախոսությունների ձևով (խոսքային մեթոդ),
- մեթոդական-գործնական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- ուսումնամարզական պարապմունքներ (ինտերակտիվ մեթոդ),
- անհատական և խմբակային լրացուցիչ պարապմունքներ (խմբային մեթոդ),
- ինքնուրույն պարապմունքներ դասախոսի հանձնարարությամբ և հսկողությամբ (խմբային մեթոդ),

2. արտաուսումնական պարապմունքներ.

- ֆիզիկական վարժությունների կատարում օրվա ընթացքում,
- վերականգնողական միջոցառումների իրականացում,
- մասնակցություն պարապմունքներ ըստ նախընտրած մարզաձևերի,
- ինքնուրույն պարապմունքներ ֆիզիկական վարժություններով, սպորտով, տուրիզմով,
- մասնակցություն մասսայական առողջարարական և սպորտային միջոցառումներ բուհում,
- մարզաառողջարարական ճամբարների կազմակերպում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

Դասընթացն ավարտվում է ստուգաքրով: Ստուգաքրը համարվում է հանձնած, եթե ուսումնառողը ապահովում է ստուգիչ վարժությունների կատարումը և բավարարում է սահմանված նորմատիվների պահանջներին:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

3-րդ կիսամյակ աշնանային

Թեմա1. Ուսանողական սպորտը, բուհում սպորտային պատրաստության կազմակերպման և պլանավորման առանձնահատկությունները: Թեմա2. Շարային պատրաստություն, դարձումներ տեղում, շարային քայլք: Թեմա 3. Վազքի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում, վազք փոփոխական արագությամբ, վազք 60 մ, 100 մ /ցածր մեկնարկից/: Հեռացատկի տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Հեռացատկ տեղից, տեխնիկայի ուսուցում և ամրապնդում: Վազք արգելքների հաղթահարումով: Վազք 500 մ /աղջիկներ/, 1000 մ /տղաներ/: Թեմա 4. Ուսանողական սպորտային մրցումների համակարգը, ունիվերսիադաներ, օլիմպիական խաղեր: Օլիմպիզմը և օլիմպիական դաստիարակությունը: Թեմա 5. Սպորտային խաղ վոլեյբոլ, խաղի կանոնների ամրապնդում, սկզբնահարվածի ուսուցում և ամրապնդում: Գնդակի ընդունում և փոխանցում 2 ձեռքով: Թեմա 6. Սպորտային խաղ բասկետբոլ, խաղի կանոնների ամրապնդում: Թեմա 7. Կանոնավոր պարապմունք ների համար սպորտաձևի ընտրման դրդապատճառները և հիմնավորումը: Հիմնական սպորտաձևերի և ֆիզիկական վարժությունների համամակարգերի համառոտ հոգեֆիզիոլոգիական բնութագրերը: Թեմա 8. Սպորտային խաղ սեղանի թենիս, խաղի կանոնների ուսուցում, սկզբնահարվածի ուսուցում: Թեմա 9. Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնձի առաջ, ետ, «կամուրջ», կանգ թիակների վրա պառկած դրությունից: Թեմա 10. Մարմնամարզություն: Ցատկ այծիկի վրայից՝ ոտքերը գատած եղանակով:

4-րդ կիսամյակ՝ գարնանային

Թեմա1. Տարբեր մարզաձևերով պարապմունքների առանձնահատկությունները: Անհատի ֆիզիկական, շարժողական և հոգեկան հատկությունների վրա դրանց ներգործության բնութագրերը: Թեմա 2. Ակրոբատիկ վարժություններ. գլուխկոնձի առաջ, ետ, «կամուրջ» պառկած դրությունից, կանգ թիակների վրա, կանգ գլխի վրա, գլորումներ, գլուխկոնձի երկարությամբ: Մարզանստարանի վրա հենում պառկած դրությունից ձեռքերի ծալում և ուղղում: Թեմա 3. Մարզապարապմունքների արդյունավետության հսկողությունը, ընտրած սպորտաձևի կամ ֆիզիկական վարժությունների համակարգերի կատարելագործման նորմաները: Թեմա 4. Սպորտային խաղ վոլեյբոլ: Վերնից սկզբնահարվածի, հարձակողական հարվածի տիրապետման, խաղի պաշտպանության տեխնիկաների ուսուցում և ամրապնդում:

Թեմա 5. Սպորտային խաղեր փետրագնդակ, սեղանի թենիս, նրանց տեխնիկական և տակտիկական տարրերի ամրապնդում: Թեմա 6. Սպորտով կանոնավոր պարապելու դեպքում օրգանիզմի վիճակի ինքնահսկողությունը, նրա հիմնական մեթոդները, ցուցանիշները և ինքնավերահսկման օրագիրը: Թեմա 7. Սպորտային խաղ բասկետբոլ, գնդակին տիրապետելու, պաշտպանության, զամբյուղի մեջ գնդակի նետման տեխնիկաների ամրապնդում: Թեմա 8. Սպորտային խաղեր վոլեյբոլ և բասկետբոլ: Երկկողմանի խաղ: Թեմա 9. Առաջին բուժօգնությունը վնասվածքների դեպքում: Թեմա 10. Վազք. ընթացքից, արագացումներով, ցածր մեկնարկից, փոփոխական: Կարճ վազքի տեխնիկայի առանձնահատկությունները՝ 100 մ, 200 մ, 300 մ: Վազք արգելքների հաղթահարումով (աղջիկներ՝ 200-300 մ, տղաներ՝ 500 մ): Վազք 500 մ (աղջիկներ), 1000 մ (տղաներ): Թեմա 11. Հեռացատկ տեղից զույգ ոտքերի հրումով: Թեմա 12. Արտադրական ֆիզիկական կուլտուրա, արտադրական մարմնամարզություն, նրանց նշանակությունը մասնագիտական գործունեության մեջ և նրանց առանձնահատկությունները: Թեմա 13. Ստուգարքային ձևերի նախապատրաստում:

14. Հիմնական գրականության ցանկ

1. Սամվելյան Լ., Պետրոսյան Գ., Թումանյան Հ., Գրիգորյան Ա., Ֆիզիկական դաստիարակության ծրագիր, (Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար), Եր., 2007:
2. Ազիզյան Գ., Վանեսյան Հ., Ֆիզիկական պատրաստություն, Եր., 2002:
3. Ավագյան Է., Ֆիզիկական պատրաստություն, Ուսումնական ձեռնարկ, Եր., 1978:
4. Բարսյան Հ., Ուսանողների գեղագիտական դաստիարակություն ֆիզդաստիարակության գործընթացում, Եր., 2000:
5. Բարսյան Ս., Մարմնամարզության հիմունքներ, Եր., 1989:
6. Բոյախյան Գ., Մարմնամարզության կիրառական վարժություններ ուսանողների համար, Եր., 2005:
7. Թումանյան Հ., Դիմացկունություն, տարիքային փոփոխությունները և նրա մշակման մեթոդիկան, Եր., 2002:
8. Մելիքսեթյան Ռ., Տեսական գիտելիքների ուսուցումը ֆիզիկական կուլտուրայի դասերին, Եր., 1991:
9. Մելքոնյան Հ., Կալաջյան Ե., Մարզախաղեր: Խաղերի կանոնները, Եր., 2007:
10. Նահապետյան Ս., Ընդհանուր զարգացնող վարժություններ, Եր., 1988:

| | | |
|---|------------------|-----------------|
| 1.0305/B06 | 2.Ռուսաց լեզու-2 | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.0/30/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է ապահովել և կատարելագործել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կառուցման ունակությունները և մասնագիտական լեզվի տիրապետումը:</p> <p>Դասընթացի խնդիրներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորել գիտելիքներ՝ հիմնված ժամանակակից պատկերացումների վրա, 2. վեր հանել թերություններն ու շտկել դրանք, 3. խորացնել ուսանողի լեզվական հմտությունները և հաղորդակցման կարողությունները, 4. հատուկ ուշադրություն դարձնել մասնագիտական բառապաշարին՝ ուսումնասիրվող թեմաների շրջանակներում: | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. գործածելու տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, 2. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով, | | |

| |
|---|
| <p>3. գործածելու մասնագիտական տեքստին հատուկ շարահյուսական կառուցվածքները:</p> <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով, 2. կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները, 3. վերարտադրելու մասնագիտական տեքստը, նաև ներկայացնելու նրա բովանդակությունը սեղմ և ընդարձակ, 4. թարգմանելու մասնագիտական տեքստը հայերենից ռուսերեն և հակառակը, 5. զանազանելու մասնագիտական հատուկ շարահյուսական կառուցվածքները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. գնահատելու, վերլուծելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը, 2. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Գ2. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:</p> <p>Գ6. տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. քննարկում /բանավեճ, 2. համագործակցային աշխատանք, 3. էվրիստիկական մեթոդ, 4. մտազրոհ, 5. ինդուկտիվ մեթոդ, 6. դեդուկտիվ մեթոդ, 7. վերլուծական մեթոդ, 8. խոսքային կամ բանավոր մեթոդ, 9. գրավոր մեթոդ, 10. բացատրական մեթոդ: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:</p> |
| <p>12. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Ձևաբանություն: Դերբայ, դերբայական դարձված, ուղղագրությունը: Մակբայ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Կապեր, շաղկապներ, մասնիկներ, ձայնարկություններ, քերականական կարգերը, ուղղագրությունը: Թեմա 2. Շարահյուսություն. շարահյուսության հիմնական միավորները /բառա-կապակցություն, նախադասության դասեր/: Պարզ նախադասություն, դասակարգումը, նախադասության գլխավոր և երկրորդական անդամները: Բարդ նախադասություն, դասակարգումը, տեսակները: Թեմա 3. Մասնագիտական տեքստ, կառուցվածքը, տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները: Թեմա 4. Մասնագիտական տեքստի թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության տեսության հիմնական խնդիրները: Գիտական զեկույցների և մասնագիտական ռեֆերատների կառուցման հիմնական սկզբունքները:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> |

1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004.
2. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация. Речь. П.Б.Балаян, Л.А.Тер-Саркисян, Б.С.Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015г.
3. Учебные пособия по специальности.

| | | |
|---|------------------------|-----------------|
| 1.0304/B07 | 2.Հայոց պատմություն -1 | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 Ժամ/շաբ. | 5.15/0/15 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Մտուգարք | |
| <p>8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ ծագումից մինչև 17-րդ դարն ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք Հայկական լեռնաշխարհի պատմական աշխարհագրության, համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտական բարձր մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն ՀՀ քաղաքական լավագույն ապագայի կերտման նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն:</p> <p><u>Դասընթացի խնդիրները.</u></p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորել հստակ պատկերացում հայոց հին և միջնադարյան պետականությունների առանձնահատկությունների, զարգացման ընթացքի և փուլերի մասին, 2. ձևավորել պատմական փաստերը համադրելու, երևույթները համակողմանի գնահատելու կորոշություն, 3. ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների հետ տրամաբանական կամ պատճառահետևանքային կապ ապահովելու համար: | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությանը վերաբերող հիմնական փաստական նյութը, 2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները, 3. ներկայացնելու համապատասխան ժամանակաշրջանում ստեղծված հոգևոր և նյութական մշակույթի արժեքները, լուսաբանելու Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսության, ռազմական և այլ բնագավառներ ու նվաճումները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը՝ 2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում՝ 3. արժևորելու ինչպես նախաքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական դարաշրջաններում ստեղծված մեր մշակութային արժեքները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. տարբերակելու և գնահատելու մեր պատմության բնորոշ առանձնահատկությունները, ինչը և հնարավորություն կտա քաղաքական կողմնորոշում ունենալու ներկայում և ապագայում, 2. բանավիճելու: | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Ա5.գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերի, նշանակության գնահատում իրականացնելու</p> | | |

| |
|---|
| <p>կարողություն, Գ6.տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. ռեֆերատ 3. անհատական և խմբային առաջադրանքներ: |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարք. Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հայաստանը հնագույն շրջանում: Թեմա 2. Հայաստանի հին շրջանի պատմությունը. Վանի թագավորությունը /Ք.ա.9-6-րդ դդ/: Երվանդունիների թագավորությունը: Թեմա 3. Մեծ Հայքի թագավորության վերելքը Արտաշեսյան շրջանում: Թեմա 4. Արշակունիների թագավորությունը: Թեմա 5. Հայաստանը վաղ միջնադարում: Թեմա 6. Հայաստանը զարգացած միջնադարում: Թեմա 7. Հայաստանը ուշ միջնադարում:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Հայոց պատմություն (Հր. Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն (Ստ.Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Եր., 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր (Հր.Միմոնյանի խմբագրությամբ), Եր., 2000: 4. Հայոց պատմություն (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Եր., 2009: |

| | | |
|--|---|-----------------|
| 1.0105/ B08 | 2.Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.4-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է ուսումնասիրել կենսոլորտի կառուցվածքի տեսական հիմնահարցերը և «մարդկենսոլորտ» համակարգում նրանց փոխազդեցությունը, ինչպես նաև պատրաստել որակյալ մասնագետներ, որոնք կարող են գնահատել շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը, որպես հասարակության գործունեության արդյունք և նախազգուշացնել լու կամ կանխարգելելու անթրոպոգեն գործունեության ոչ ցանկալի հետևանքները: Նպաստել հասկանալու էկոլոգիական հիմնախնդիրների էությունը և զարգացնել այդ խնդիրները լուծելու ունակությունը: Սովորողներին նախապատրաստել աշխարհայացքի ինքնուրույն ընտրության:</p> <p>Դասընթացի խնդիրներն են.</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ՝ էկոլոգիայի հիմնական հասկացությունների և օրենքների, էկոլոգիական համակարգերի և գործընթացների, շրջակա միջավայրի էկոլոգիական հնարավորությունների, բնական և տեխնոգեն միջավայրերի, ժամանակակից զարգացման տենդենցների, էկոլոգիական մշակույթի, որպես գործոնի ձևավորման, էկոլոգիական ճգնաժամների, էկոլոգիայի բնագավառում միջազգային իրավական նորմերի, Հայաստանի Հանրապետությունում գործող էկոլոգիական օրենսդրության մասին, • ուսանողների մոտ զարգացնել հմտություններ բնագիտությունից, էկոլոգիայից, բնապահպանությունից՝ ձևավորելով դիտարկելու, ստեղծագործելու, հետազոտելու ունակությունները, տրամաբանական և գիտական լեզվամտածողությունները, եզրակացություն անելու կարողությունները, • դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն՝ մարդկության և բնական միջավայրի նկատմամբ: | | |

| |
|--|
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. սահմանելու էկոլոգիայի հիմնական հասկացությունները, էկոլոգիական հիմնական և կարևոր օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները և կանոնները, 2. նշելու շրջակա միջավայրի զարգացման կոնցեպցիաները և թվարկելու մթնոլորտի, ջրոլորտի և հողոլորտի վրա հիմնական անթրոպոգեն ազդեցություն ունեցող աղտոտող նյութերը և ներկայացնելու նրանց վերլուծության մեթոդները, 3. բացատրելու, թե ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության վրա շրջակա միջավայրի աղտոտման հետևանքները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. էկոլոգիական գնահատական տալու շրջակա միջավայրի հիմնական գործոններին, 2. նախագրուշական միջոցառումներ ներկայացնելու՝ զերծ պահելու շրջակա միջավայրը էկոլոգիական աղետներից, 3. անցկացնելու մոնիթորինգ և գնահատելու տարածաշրջանի էկոլոգիական իրավիճակը, համապատասխան եզրակացություն տալ այն նպաստող գործոնների մասին, որոնք կբարելավեն տարածաշրջանի էկոլոգիան: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ցուցաբերելու ինքնուրույն ուսումնասիրելու ունակություն: 2. հետազոտություններ անելու, ստացած տեղեկությունը արհեստավարժ օգտագործելու խնդիրների լուծման նպատակով: 3. տվյալ էկոհամակարգի վրա կիրառելու կանխատեսման մեթոդը՝ որոշելու նրա վրա այս կամ այն գործոնի ազդեցությունը: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Գ4. ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p>Գ6. տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջումները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. պասիվ դասախոսություն, 2. ակտիվ դասախոսություն, հարց ու պատասխան, զրույց, 3. ինտերակտիվ դասախոսություն՝ «Power Point» համակարգչային ծրագրով դրվագների ցուցադրում, 4. հարց ու պատասխան, 5. բանավեճ, 6. զրույց: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Բանավոր քննում ըստ նախապես ներկայացված հարցաշարի կամ դասախոսի կողմից առաջադրված թեմայով ռեֆերատի:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. էկոլոգիայի համառոտ պատմությունը: էկոլոգիայի կառուցվածքը, առարկան և օբյեկտը: Լիբիխի, մինիմումի, Վիյամի գործոնների անկախության և Շելֆորդի տոլերանտության օրենքները: Թեմա 2. էկոհամակարգի գործունեության սկզբունքները: էկոհամակարգի կառուցվածքը: Պրոդուցենտներ, կոնսումենտներ, ռեդուցենտներ /ավտոտրոֆներ, հետերոտրոֆներ/: Թեմա 3. Օրգանիզմների գոյության միջավայրը և պայմանները: Կենսական, ոչ կենսական, մարդածին, սահմանափակող գործոններ: Օրգանիզմների հարմարվելը միջավայրի պայմաններին: Թեմա 4. էներգիայի և նյութերի հոսքը էկոհամակարգում: էկոհամակարգերի էներգետիկական դասակարգումը: էներգիայի և նյութերի</p> |

փոխանցումը էկոհամակարգերում, էներգիայի կորուստները սննդային շղթաներում: Ազոտի, ֆոսֆորի, ծծմբի, ածխածնի շրջանառությունը: Թեմա 5. Մարդու առողջության էկոլոգիական ասպեկտները: Միջավայրի քիմիական, կենսաբանական աղտոտումը, միջավայրի աղտոտումը աղմուկով, սննդամթերքների աղտոտումը: Գյուղատնտեսական և ուրբանիստական համակարգեր: Թեմա 6. Անսպառ և սպառվող պաշարները: Մարդու ազդեցությունը կենսոլորտի վրա: Արդյունաբերության առաջընթացը և բնապահպանության հիմնախնդիրները: Արդյունաբերության էկոլոգիացման սկզբունքները: Թեմա 7. Քարոլորտի կառուցվածքը: Մթնոլորտի կառուցվածքը, նշանակությունը: Ջուրը երկրի վրա և նրա հատկությունները: Կենսոլորտի կառուցվածքը: Հողը, նրա կառուցվածքը և նշանակությունը բնության մեջ: Թեմա 8. Պոպուլյացիայի բնութագիրը; ծնելիություն և մահացություն, պոպուլյացիայի սեռային կազմը; պոպուլյացիաների միջև գոյություն ունեցող փոխազդեցության ձևերը, գիշատիչ-զոհ փոխհարաբերությունը: Թեմա 9. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրները և դրա էկոլոգիական հետևանքները: Ջրոլորտի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Քարոլորտի և բնահողի վրա մարդածին բացասական ազդեցությունները: Երկրի կլիմայի փոփոխության և անապատացման հիմնախնդիրները:

14. Հիմնական գրականության ցանկ.

11. Գրիգորյան Կ., Եսայան Ա., Ժամհարյան Հ., Խոյեցյան Ա., Մովսեսյան Հ., Փիրումյան Գ., էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ, Եր., 2010:
12. Գրիգորյան Ա., Աղայան Ա., ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի ներկա վիճակը, Եր., 2008
13. Մելքումյան Լ., Գալստյան Մ., Բնապահպանության հիմունքներ, Եր., 2010:
14. Շահինյան Մ., Թամրազյան Ն., էկոլոգիա, Եր., 2002:
15. Валова В., Основы экологии: Учебное пособие.-5-е изд., Москва, «Дашков и К» 2005.

| | | |
|-----------------|-------------------------|-----------------|
| 1.0304/B09 | 2. Հայոց պատմություն -2 | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.15/0/15 | |
| 6.4-րդ կիսամյակ | 7. Ստուգաք | |

8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը՝ 17-րդ դարից մինչև մեր օրերը ընկած ժամանակահատվածը: Այդ նպատակով նախ տրվում է նախագիտելիք համապատասխան ժամանակաշրջանների պատմության սկզբնաղբյուրների վերաբերյալ, որից հետո ներկայացվում է պատմությունը՝ գիտության ամենավերջին ձեռքբերումների մակարդակով: Դասընթացում ոչ միայն ներկայացվում են փաստերն ու իրադարձությունները, այլև տրվում է դրանց վերլուծությունը, ինչն անհրաժեշտ է պատմությունից դասեր քաղելու և այն հանուն մեր ապագայի կառուցման գործածելու նպատակով: Առանձին թեմաներով ուսումնասիրվում են հայ հոգևոր և նյութական մշակույթը, Հայաստանի պետական կառավարման համակարգերը, տնտեսությունը, որոնք ևս ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական նշանակություն: Հայոց պատմությունը դիտարկվում է համաշխարհային պատմության համատեքստում:

- Դասընթացի խնդիրները.
- ներկայացնել հայոց նոր և նորագույն պատմության առանձնահատկությունները, զարգացման ընթացքը և փուլերը,
 - համադրել պատմական փաստերը, համակողմանի գնահատել երևույթները,
 - ապահովել գիտելիքներ և հիմք հետագա դասընթացների ուսումնասիրման, քննարկման և ներկայացման համար:

9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝
 ա. մասնագիտական գիտելիք և իմացություն
 1. վերարտադրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների պատմությունը վերաբերող հիմնական փաստական նյութը,

| |
|---|
| <p>2. նկարագրելու հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանների գլխավոր իրադարձությունները:</p> <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>1. բացահայտելու պատմական տվյալ ժամանակահատվածի իրադարձությունների պատճառահետևանքային կապերը,</p> <p>2. արժևորելու պատմական տվյալ ժամանակահատվածի կարևոր իրադարձությունները՝ համաշխարհային պատմության համատեքստում:</p> <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <p>1. տարբերակելու և գնահատելու մեր պատմության որոշակի օրինաչափությունները, ինչը ևս հնարավորություն կտա ապագայում ճիշտ կողմնորոշվելու:</p> |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Ա5. գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը, նշանակությունը, Գ6. տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. սեմինար 3. ռեֆերատ 4. անհատական և խմբային առաջադրանքներ: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարք. Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.. Թեմա 1. Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: Թեմա 2. Ռուսաստանի ներթափանցումը Անդրկովկաս 19-րդ դարի սկզբին: Թեմա 3. Հայկական հարցի միջազգայնացումը: Թեմա 4. Ազատագրական խմբակների, կազմակերպությունների ու քաղաքական-ազգային կուսակցությունների ձևավորումը: Թեմա 5. Ազգային-ազատագրական զինված պայքարի փուլը: Թեմա 6. Իրավիճակը Հայաստանը 20-րդ դարի սկզբին: Արևմտահայության Մեծ Եղեռնը և ինքնապաշտպանական մարտերը: Թեմա 7. Հայաստանը 1917թ. ռուսական հեղափոխությունների շրջանում: Թեմա 8. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.: Թեմա 9. Խորհրդային Հայաստանը 1920-1991թթ.: Թեմա 10. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը: Թեմա 11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Հայոց պատմություն, (Հր.Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2012: 2. Հայ ժողովրդի պատմություն, (Ստ.Մելիք-Բախշյանի խմբագրությամբ), Երևան, 1975: 3. Հայոց պատմություն. հիմնահարցեր, (Հր.Սիմոնյանի խմբագրությամբ), Երևան, 2000: 4. Հայոց պատմություն, (Պողոսյան Ս., Ասրյան Ա.), Երևան, 2009: |

| | | |
|--|--------------------|-----------------|
| 1.0304/B10 | 2.Փիլիսոփայություն | 3.3 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.5-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար:</p> | | |

| |
|---|
| <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, 2. բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, 3. հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը: |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները, 2. բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները, 3. ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից, 2. վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը, 3. կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա6. տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին, մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն),</p> <p>Բ3. կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելուով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,</p> <p>Գ6. տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջումները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. սեմինար 3. քննարկում 4. զեկուցում 5. ռեֆերատ: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Դասընթացն ավարտվում է ստուգարքով, որն անց է կացվում բանավոր հարցումով՝ հարցատոմսի հարցերի հիման վրա:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Փիլիսոփայության առարկան: Թեմա 2. Կեցություն և մատերիա: Թեմա 3. Դիալեկտիկա: Թեմա 4. Բնություն: Թեմա 5. Մարդ և պրակտիկա: Թեմա 6. Գիտակցություն և ճանաչողություն: Թեմա 7. Գիտություն: Թեմա 8. Հասարակություն:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Եր., 1980: |

2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Ն. 1, Եր., 1987:
 3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Ն. 2, Եր., 1987:
 4. Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1980:
 5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Եր., 2004:
 6. Փիլիսոփայության բառարան, Եր., 1975:

| | | |
|---|--------------|-----------------|
| 1.0305/ B11 | 2.Անգլերեն-1 | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 Ժամ/շաբ. | 5.0/30/0 | |
| 6.1-ին կիսամյակ | 7.Ստուգաք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները՝ միջմշակութային հաղորդակցման:</p> <p>Դասընթացի խնդիրները</p> <ol style="list-style-type: none"> ներկայացնել տվյալ մասնագիտության ոլորտում խիստ գործածական բառապաշար, զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում: | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> անգիր վերարտադրելու մասնագիտական բառապաշարը, թվարկելու հնչյունական և ուղղախոսական կանոնները և բացատրությունները, թվարկելու նախադասության տիպերը և դրանց շարադասական հատկանիշները, տարբերելու խոսքի մասերը և դրանց կիրառական առանձնահատկությունները, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> կիրառելու մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս, ընկալելու կարդացած և ունկնդրած նյութի հիմնական բովանդակությունը, կատարելու A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն, <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> տարանջատելու հիմնական տեղեկատվությունը երկրորդականից, իրականացնելու համատեղ աշխատանք թիմում, կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Գ2. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ6.տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> | | |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> հաղորդակցական մեթոդ մտազրոհ ուսանողական պորտֆոլիո խմբային աշխատանք գրավոր և բանավոր թարգմանություն աշխատանք տեղեկագրով ռեֆերատ ինքնուրույն աշխատանք: | | |

| |
|---|
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները Դասընթացն ավարտվում է ստուգարքով, որն անց է կացվում բանավոր հարցումով՝ հարցատոմսի հարցերի հիման վրա:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա1. Հնչյունաբանություն և ուղղախոսություն: Հնչյունների դասակարգումը և արտասանական հատկանիշները: Թեմա2. Քերականություն: Խոսքի մասեր: Շարահյուսություն: Թեմա 3. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Միջազգային զբոսաշրջության հիմնահարցեր: Թարգմանություններ անգլերենից հայերեն:</p> |
| <p>14.Հիմնական գրականության ցանկ. 1. Mkhitaryan Ye., Basic English for University Students, YSU Press, Yerevan. 2004 2. Cincotta Howard (Ed.), An Outline of American History. United States Information Agency. 1994 3. Kirn Elaine, About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division. 1989 4. Myers Sondra (Ed.), Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College. 1997 5. Short Deborah J., Seufert-Bosco Margaret & Grognet Allene Guss, By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc. 1995</p> |

| | | |
|--|---------------|-----------------|
| 1.0305/B10 | 2.Ֆրանսերեն-1 | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.0/30/0 | |
| 6.1-ին կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ հարստացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականական և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա: Այս փուլում ստացած գիտելիքները հիմք են հանդիսանում հետագա՝ առավել խորացված ուսումնասիրության համար:</p> <p><u>Դասընթացի խնդիրները.</u></p> <ol style="list-style-type: none"> խորացնել դպրոցում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ, հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները: | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները, ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները, ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները, լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ), առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն, | | |

| |
|---|
| <p>2. ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները,</p> <p>3. ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր,</p> <p>4. բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր:</p> |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Գ2. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությունում:</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ6.տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. դիագնոստիկ ստուգում 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք՝ |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Դասընթացն ավարտվում է ստուգարքով, որն անց է կացվում բանավոր հարցումով՝ հարցատոմսի հարցերի հիման վրա:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Ռիթմիկ խմբեր: Շեշտ: Enchainement. Liaison. Թեմա 2. Հատուկ և հասարակ գոյական: Գոյականի սեռը, թիվը: Սեռի արտահայտությունը հոդերի և ածանցների միջոցով: Թեմա 3. Որոշյալ և անորոշ հոդ: Մասնական հոդը որպես անորոշ քանակ արտահայտելու միջոց: Միաձուլված հոդ: Հոդը չօգտագործելու դեպքերը: Թեմա 4. Ածական: Ածականի համաձայնությունը գոյականի հետ: Ածականի իմաստի փոփոխությունը՝ կախված նրա դիրքից: Թեմա 5. Ցուցական, ստացական, հարցական և բացականչական, անորոշ ածականներ: Թեմա 6. Թվական: Քանակական և դասական թվականներ և դրանց գործածությունը: Թեմա 7. Դերանուն: Անձնական անշեշտ դերանուններ, դրանց գործածությունը որպես ենթակա, ուղիղ և անուղղակի խնդիր: Անձնական շեշտված դերանուններ:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Попова И., Казакова Ж., «Французский язык», М., 2008 2. M.Gregoire, Od.Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire). 3. Cl.Miquel, «Communication progressive du francais» (Niveau debutant), 4. M.Djoulhakian, R.Meliksntian, A.Mouradian, «Manuel de francais», Er. 2011. |

| | | |
|---|---|-----------------|
| 1.0001/B02 | 2.Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.15/15/0 | |
| 6.1-ին կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է սովորողների մոտ ձևավորել ԱԻ-ների մասին պատկերացում, ԱԻ-ներում գործելու հմտություններ, փրկարարական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ հմտություններ և տարաբնույթ պատահարների ժամանակ հնարավոր վնասվածքների և այլ ախտահարումների դեպքում առաջին բուժօգնության ցուցաբերման անհրաժեշտ կարողություններ:</p> | | |

| |
|---|
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու տարաբնույթ ԱԻ-ների հետևանքով ստեղծված իրավիճակները և դրան դիմակայելու ուղիները, 2. ներկայացնելու տեղեկատվություն ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների մասին, 3. մեկնաբանելու ՀՀ-ում հավանական ԱԻ-ներից բխող ռիսկերի գնահատման մեթոդները, 4. ներկայացնելու համաճարակային իրավիճակներում վարակի տարածման հնարավոր ուղիներն ու բացատրելու դրանցից պաշտպանության ձևերը, 5. ներկայացնելու առաջին բուժօգնություն ցուցաբերելու հիմնահարցերը՝ <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. գնահատելու տուժածի վիճակը (առաջնային և երկրորդային գնում), վնասվածքի տեսակն ու ծանրությունը և ցույց տալ առաջին բուժօգնություն, 2. դրսևորելու նախընտրելի վարքագիծ տարաբնույթ արտակարգ իրավիճակներում, 3. ցուցաբերելու առաջին բուժօգնություն տարաբնույթ վնասվածքների և ախտահարումների դեպքերում, 4. օգտագործելու ձեռք բերված կարողությունները ԱԻ և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները գործնականում, 2. աշխատելու թիմում և լուծելու բարդ խնդիրներ, 3. վերլուծելու իրավիճակը և կատարելու անհրաժեշտ գործողություններ իր և շրջապատի համար: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Գ4. ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p>Գ7. կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. սեմինար 3. հարցադրումներ և քննարկումներ 4. լաբորատոր աշխատանքներ 5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Դասընթացն ավարտվում է ստուգարքով: Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման միջոցով՝ Հարցերի 50%-ին պատասխանելու դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p><u>Բաժին 1.</u> Արտակարգ իրավիճակներ ու պատահարներ: Թեմա 1. Արտակարգ իրավիճակների նախարարության կառուցվածքն ու խնդիրները: Թեմա 2. Արտակարգ իրավիճակները, նրանց բնութագրերն ու կանխարգելման միջոցառումները: <u>Բաժին 2.</u> Քաղաքացիական պաշտպանություն: Թեմա 3. Բնակչության գործողությունները ահաբեկոթյունների և նրանց սպառնալիքի ժամանակ: Թեմա 4. Հակառակորդի հարձակման ժամանակակից միջոցների բնութագրերը, նրանց վարակման օջախները և գնահատման մեթոդները: Թեմա 5. Բնակչության պաշտպանության պաշտպանության կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ: Թեմա 6. Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները: Թեմա 7. Փրկարարական աշխատանքների կազմակերպումը արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ, տեղեկատվության կազմակերպումը: <u>Բաժին 3.</u> ԱԻ-ում բնակչության</p> |

առաջին բուժօգնություն: Թեմա 8. Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն արտակարգ իրավիճակներում: Թեմա 9. Ախտահարվածների ու հիվանդների բժշկական տեսակավորումը արտակարգ իրավիճակների պայմաններում: Թեմա 10. Սուր հիվանդություններ և թունավորումներ: Թեմա 11. Հակահամաճարակային միջոցառումներն արտակարգ իրավիճակներում: Թեմա 12. Վնասվածքներ և սուր վիրաբուժական հիվանդություններ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Մարկարյան Ռ.Վ., Ջանջուղազյան Ն.Ա., Օհանջանյան Մ.Մ., Հարությունյան Ա.Ա., Հարությունյան Վ.Ս., Բաղդասարյան Լ.Լ., Հասրաթյան Ռ.Ց., Վարդանյան Ջ.Հ., «Քաղաքաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Եր., 2006:
2. Հեղինակների կոլեկտիվ, «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում», ուսումնական ձեռնարկ, Եր., 2007:
3. Մանասյան Կ.Ա., «Միրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը» (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., 2007:
4. Ադամյան Մ.Խ., «Փոխադրական անշարժացում», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., 2011:
5. Մանուկյան Ա., Ճաղարյան Գ. «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», ուսումնական ձեռնարկ, Եր., 2017:

| | | |
|---|--------------|-----------------|
| 1.0305/B11 | 2.Անգլերեն-2 | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.0/30/0 | |
| 6.2-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ հարստացնել մասնագիտական բառապաշարը, խորացնել ուսանողների գիտելիքները և հմտությունները հաղորդակցական բարդ իրավիճակներում: Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և նմուշների հիման վրա ձևակերպել սեփականը, 2. հաղորդել գիտելիքներ մասնագիտական նորաբանությունների ոլորտից: | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. թվարկելու պաշտոնական գրագրության ժամանակ անհրաժեշտ սկզբունքները և ներկայացնելու սեփական օրինակները, 2. կազմելու գրավոր և բանավոր շարադրանք՝ օգտագործելով A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ընկալելու և վերարտադրելու կարդացած և ունկնդրած A2 մակարդակի տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը, 2. շարադրելու խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան, 3. կատարելու A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. իրականացնելու համատեղ աշխատանք թիմում, 2. կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներ և ներկայացնելու պրեզենտացիաներ, 3. ներգրավելու ձեռք բերված գիտելիքները և կարողությունները միջազգային ասպարեզում՝ անգլերենը օգտագործելով որպես հետագա մասնագիտական առաջընթացի միջոց: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Գ2. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրույթում:</p> | | |

| |
|--|
| <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ6. տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. հաղորդակցական մեթոդ 2. մտազրոհ 3. ուսանողական պորտֆոլիո 4. խմբային աշխատանք 5. գրավոր և բանավոր թարգմանություն 6. աշխատանք տեղեկագրով 7. ռեֆերատ 8. ինքնուրույն աշխատանք: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Դասընթացն ավարտվում է ստուգարքով, որն անց է կացվում բանավոր հարցումով՝ հարցատոմսի հարցերի հիման վրա:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Պաշտոնական գրագրություն: Ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ, դիմում:</p> <p>Թեմա 2. Մասնագիտական բառապաշարի և տեքստերի ուսումնասիրություն: Զրուսաշրջություն և սերվիս: Թարգմանություններ անգլերենից հայերեն, հայերենից անգլերեն:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Mkhitaryan Ye., Basic English for University Students, YSU Press, Yerevan. 2004 2. Cincotta Howard (Ed.), An Outline of American History. United States Information Agency. 1994 3. Kirn Elaine, About the U.S.A. United States Information Agency, Materials Branch of the English Language Programs Division. 1989 4. Myers Sondra (Ed.), Democracy Is a Discussion: Civic Engagement in Old and New Democracies: The Handbook. New London, CT: Connecticut College, 1997. 5. Short Deborah J., Seufert-Bosco Margaret & Grognet Allene Guss, By the People, for the People: U.S. Government and Citizenship. McHenry, IL: Delta Systems Co., Inc. 1995. |

| | | |
|--|---------------|-----------------|
| 1.0305/B11 | 2.Ֆրանսերեն–2 | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.0/30/0 | |
| 6.2-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ խորացնել և զարգացնել նախորդ փուլում ձեռք բերված գիտելիքները, ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր մասնագիտական տեքստերից օգտվելու ունակություններ:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. խորացնել նախորդ կիսամյակում ստացած գիտելիքները՝ շեշտը դնելով ֆրանսերենի հնչյունաբանության, քերականության և բառապաշարի հիմնական առանձնահատկությունների վրա, 2. ֆրանսերենի քերականական կառուցվածքի և բառապաշարի հիմնական շերտի յուրացման հիման վրա ձևավորել խոսքային հմտություններ և գրավոր տեքստերից օգտվելու ունակություններ, 3. հանրագումարի բերել ստացված գիտելիքները՝ դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները: | | |
| 9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ | | |

| |
|---|
| <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու ֆրանսերենի արտասանական նորմերը, հնչյունական համակարգը և հնչյունական յուրահատկությունները, 2. ձևաբանորեն և շարահյուսորեն ճիշտ վերլուծելու բառը և նախադասությունը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ճիշտ արտասանելու ֆրանսերեն հնչյունները և դրանց տառադարձման նշանները, 2. ճիշտ հնչերանգով ձևակերպելու հաստատական, հարցական, բացականչական և հրամայական նախադասությունները, 3. լսելով՝ հասկանալու և վերաշարադրելու տեքստը, որը պարունակում է յուրացրած բառապաշարը և քերականական նյութը (թույլատրվում է 2-3% անձանոթ բառ), 4. առանց բառարանի կարդալու և վերաշարադրելու միջին բարդության մասնագիտական տեքստեր: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ինքնուրույն կատարելու տեքստի ձևաբանական և շարահյուսական վերլուծություն, 2. ընկալելու և մեկնաբանելու ֆրանսերենի արտասանական յուրահատկությունները, 3. ազատորեն հաղորդակցվելու ֆրանսերենով, ընթերցելու միջին բարդության տեքստեր, 4. բառարանի օգնությամբ ընթերցելու գեղարվեստական գրականություն և մասնագիտական տեքստեր: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Գ2. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ6. տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեատ 4. ռեֆերատ 5. դիազնոստիկ ստուգում 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Դասընթացն ավարտվում է ստուգարքով, որն անց է կացվում բանավոր հարցումով՝ հարցատոմսի հարցերի հիման վրա:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Գոյականների իգական սեռի կազմության տարբեր միջոցների դասակարգում՝ քերականորեն, ձևաբանորեն, բառային: Երկու սեռ ունեցող գոյականներ: Թեմա 2. Միայն հոգնակի թվով գործածվող գոյականներ. Բաղադրյալ գոյականների հոգնակի թվի կազմությունը: Թեմա 3. Անորոշ դերանվանական ածականներ: Թեմա 4. Հարաբերական դերանուններ. դրանց ձևերը և գործածությունը նախադասության մեջ Թեմա 5. Բայ: Եղանակավորման քերականական արտահայտությունը: Թեմա 6. Ֆրանսերեն լեզվի խոնարհման բնութագիրը: Եղանակների կազմությունը և գործածությունը նախադասություններում: Թեմա 7. Նախդիրների համակարգային դասակարգում: Տարբեր հարաբերություններ արտահայտող նախդիրներ:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Попова И.Н., Казакова Ж.А., «Французский язык», Москва, 2008. 2. M.Gregoire, Od. Thievenaz, «Grammaire progressive du francais» (Niveau intermediaire). |

3. Cl.Miquel, «Communication progressive du francais» (Niveau débutant),
 4. M.Djoulhakian, R.Meliksetian, A.Mouradian, «Manuel de francais», Erevan – 2011.

ՇՆՆԱՆՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

| | | |
|---|----------------------------|-----------------|
| 1.0303/B16 | 2.Բարոյագիտոյան հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել բարոյականոյան տեսոյան հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականոյան մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցոյունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ծանոթացնել բարոյագիտոյան հիմնական հասկացոյուններին, բարոյական առաջընթացի էոյանն ու չափանիշներին, բարոյականոյան էոյանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկոյանը, գործառոյթներին, բարոյականոյան և ազատոյան հարաբերոյանը, ազգային ու համամարդկային բարոյամշակոյային արժեքներին, բարոյական արժեհամակարգին, 2. ցոյց տալ ճշմարտոյան, արդարոյան, ազատոյան, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին, 3. նպաստել անձի բարոյական մտահաղորդակցոյան ձևավորմանը, 4. բացահայտել բարոյական իդեալի էոյունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից, 5. վերլուծել բարոյականոյուն հասկացոյան տարբեր սոցիալ-մշակոյային մեկնաբանոյունները, 6. ընդլայնել սովորողների մտահորիզոնը: <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացոյուն</p> <ol style="list-style-type: none"> 1. սահմանելու բարոյագիտոյան հիմնական հասկացոյունները, բարոյական առաջընթացի էոյունը ու չափանիշները: 2. արժևորելու ազգային և համամարդկային բարոյամշակոյային արժեքները, բարոյական արժեհամակարգը: <p>բ. գործնական մասնագիտական կարողոյուններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ցոյց տալու ճշմարտոյան, արդարոյան, ազատոյան, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին: 2. բացահայտելու բարոյական իդեալի էոյունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից: 3. վերլուծելու բարոյականոյուն հասկացոյան տարբեր սոցիալ-մշակոյային մեկնաբանոյունները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողոյուններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդոյունքները.</p> <p>Բ5. ցուցաբերելու հոյուրընկալոյան կազմակերպման և զբոսաշրջային ծառայոյունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա,</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ4. ստանձնելու անձնական պատասխանատւոյունը ազգի և պետոյան հանդեպ, իր գործունեոյամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքերի իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառոյան հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսոյուն | | |

| |
|--|
| <p>2. քննարկումներ</p> <p>3. զեկուցումներ:</p> |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարք անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. <u>Բաժին 1.</u> Բարոյագիտության հիմնական կատեգորիաները. Թեմա 1. Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: Թեմա 2. Բարին և չարը: Թեմա 3. Պարտք և պատասխանատվություն: Թեմա 4. Պատիվ և արժանապատվություն: Թեմա 5. Խիղճ: Բարոյական իդեալ: Թեմա 6. Կյանքի իմաստն ու նպատակը: Թեմա 7. Երջանկություն. Սեր: <u>Բաժին 2.</u> Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները: Թեմա 8. Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: Թեմա 9. Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: <u>Բաժին 3.</u> Բարոյականություն և ազատություն: Թեմա 10. Անձը և համակեցությունը: Թեմա 11. Բարոյականության հասարակական խնդիրները: <u>Բաժին 4.</u> Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 12. Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 13. Անձի բարոյական գործունեությունը: Թեմա 14. Անձի բարոյական հարաբերությունները: Թեմա 15. Անձի բարոյական մշակույթը: <u>Բաժին 5.</u> Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Թեմա 16. Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեքստում: Թեմա 17. Ազգային-բարոյական նկարագիր: <u>Բաժին 6.</u> Բարոյագիտության կիրառական խնդիրներ: Թեմա 18. Կիրառական բարոյագիտություն:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. А. Разин, Этика, Москва, 2003. 2. О. Дробницкий, Понятие морали, Москва, 2004. 3. Дж. Мур, Прунципы этики, Москва, 1984. 4. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000. 5. Словарь по этике. |

| | | |
|---|-----------------------------|-----------------|
| 1.0201/B16. | 2.Գործարարության հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ հաղորդել ներկայիս տնտեսական պայմաններում գործարարություն կազմակերպելու և վարելու համար իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ: Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. փոխանցել համակարգված գիտելիք գործարարության կազմակերպման վերաբերյալ, 2. մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարությամբ զբաղվելու համար, 3. հաղորդել գիտելիքներ գործունեության սուբյեկտների պատասխանատվության վերաբերյալ: | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. բնութագրելու գործարարության միջավայրը և տեսակները, 2. տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը, 3. ներկայացնելու ձեռնարկության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը, 4. բացատրելու գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> | | |

| |
|---|
| <ol style="list-style-type: none"> 1. մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով, ընտրելու լավագույնը, 2. կազմակերպելու սեփական գործ և որոշելու դրա արդյունավետությունը, 3. գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում, 4. հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. աշխատելու թիմում, 2. մոտիվացնելու, 3. առաջնորդելու, 4. աշխատելու տեղեկատվության հետ: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա3. բացահայտելու զբոսաշրջության առանձնահատկությունները և զարգացումները տարածաշրջանային ու տեղական մակարդակներում,</p> <p>Բ2. իրականացնելու տուրիստական գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում,</p> <p>Բ3. կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. գործնական խաղ /թիմային աշխատանք/ 2. դասախոսություն, սեմինար 3. ինքնուրույն աշխատանք /զեկույց, ռեֆերատ/ 4. ճանաչողական էքսկուրսիաներ: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգարք անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Գործարարության էությունը և ֆունկցիաները: Թեմա 2. Գործարարության միջավայրը և տեսակները: Թեմա 3. Գործարարության սուբյեկտները: Թեմա 4. Ձեռնարկության կազմակերպչա-իրավական ձևերը: Թեմա 5. Բիզնես-գաղափարը և բիզնես հայեցակարգը, որպես գործարարության նախադրյալ: Թեմա 6. Մարքեթինգի պլան: Թեմա 7. Գործունեության կադրային ապահովումը: Թեմա 8. Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: Թեմա 9. Արտադրական պլան Թեմա 10. Ինքնարժեքի կալկուլյացիա: Թեմա 11. Ձեռնարկատիրական ռիսկ: Թեմա 12. Ֆինանսական պլանավորում:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Кондратьева М.Н., Баландина Е.В., Трефилова Ю.С., «Бизнес-планирование» учебное пособие, Ульяновск УЛГТУ 2014/ http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf/ 2. Буров В.Ю., «Основы предпринимательства», учебное пособие, Чита – 2011. 3. Богомолова В.А., Белоусова Н.М., Кублашвили О.В., Ролдугина Р.Ю., «Бизнес-планирование», учебное пособие, Москва 2014 http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf// 4. Башаримова С.И., Дасько М.В., «Основы предпринимательства» учебное пособие. 5. Торосян Е.К., Сажнева Л.П., Зарубина Ж.Н., «Основы предпринимательской деятельности», учебное пособие, Санкт-Петербург 2016 https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf//. |

| | | |
|---|-------------------------|-----------------|
| 1.0304/B16. | 2. Իրավունքի հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7. Ստուգարք | |
| 8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացած իրավական գիտելիքները | | |

| |
|---|
| <p>գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ, 2. ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններու ունակություններ: |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները, 2. ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը, 3. մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ, 2. վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում, 3. վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը, <p>գ. ընդհանրական փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. դրսևորելու քննադատական մտածողություն: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա2. մեկնաբանելու զբոսաշրջության կազմակերպման սկզբունքները, մասնագիտական նորմատիվ փաստաթղթերը,</p> <p>Բ1. իրականացնելու մարքեթինգային և մենեջերական գործունեություն՝ զբոսաշրջության և ռեկրեացիայի ոլորտում,</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. ռեֆերատ 3. զեկուցում: |
| <p>12. Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.</p> <p>Նախապես տրված հարցաշարից անց է կացվում բանավոր հարցում:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Պետության և իրավունքի տեսություն: Թեմա 2. Սահմանադրական իրավունք: Թեմա 3. Քաղաքացիական իրավունք: Թեմա 4. Քրեական իրավունք: Թեմա 5. Աշխատանքային իրավունք: Թեմա 6. Ընտանեկան իրավունք: Թեմա 7. Տեղական ինքնակառավարում: Թեմա 8. Վարչական իրավունք: Թեմա 9. Դատավարական իրավունք: Թեմա 10. Արդարա-դատություն, դատախազություն և նոտարիատ: Թեմա 11. Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: Թեմա 12. Միջազգային իրավունք:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Եր., 2002: 2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Եր., 2003, 2006: 3. Բարսեղյան Տ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Եր., 2000: 4. Դիլբանյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Եր., 1999: 5. Ղարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Եր., 2001: 6. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Եր., 2002: |

| | | |
|---|-----------------------------|-----------------|
| 1.0304/B16 | 2.Կրոնագիտության հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Ստուգաք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերմամբ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելության եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդիկրոնականներ փակ հոսանքների ու դեմոմինացիաների վերաբերյալ:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք, նկարագրելու հայ առաքելության եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները, համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերը: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Ա3.գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության, բնական ռեսուրսների դերը և նշանակությունը Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> դասախոսություն /ավանդական և ինտերակտիվ/ քննարկում /բանավեճ բացատրական մեթոդ: | | |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:</p> | | |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: Թեմա 2. Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: Թեմա 3. Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: Թեմա 4. Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: Թեմա 5. Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: Թեմա 6. Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: Թեմա 7. Հայ Առաքելության եկեղեցին V-IX դարերում: Թեմա 8. Հայ Առաքելության եկեղեցին X-XIV դարերում: Թեմա 9. Հայ Առաքելության եկեղեցին XV-XVIII դարերում: Թեմա 10. Հայ Առաքելության եկեղեցին XIX-XX դարերում:</p> | | |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> Քրիստոնյա Հայաստան՝ Հանրագիտարան, Եր., 2002 История религии (учеб. Под общ. Ред. И.Н.Яблокова) Т. 1-2. М., 2007. Лебедев В., Религиоведение; учебник для бакалавров, М. 2013. Основы религиоведения (учеб. Под общ. Ред. И.Н.Яблокова) М., 2005. Религиоведение, (учеб. Под общ. Ред. М.М.Шахнович), СПб, 2012. | | |

| | | |
|--------------|----------------------------|------------|
| 1.0303/B16 | 2.Հոգեբանության հիմունքներ | 3.2 կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |

| 6.3-րդ կիսամյակ | 7.Մտուցարք |
|--|------------|
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողին ընդհանուր հոգեբանության և դրա հիմունքներին, տարբեր բաժինների կառուցվածքին ու զարգացմանը, հոգեկանի ակտիվության մակարդակներին, անձնավորությանը, նրա կառուցվածքին և դրսևորումներին, անձի պարզագույն, հոգեկան իմացական գործընթացներին, ուսումնասիրել ընկալման, ըմբռնման առանձնահատկությունները, հիշողության, մտածողության, երևակայության առանձնահատկությունները, պարզաբանել անձի հուզականամային կողմը, անձի հոգեբանական անհատական առանձնահատկությունները:</p> | |
| <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. բացահայտել հոգեբանության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները, 2. լուծել մասնագիտական խնդիրներ, պլանավորել և իրականացնել հետազոտություններ, 3. ցույց տալ ընդհանուր հոգեբանության առանցքային տեսությունները: | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ճանաչելու ընդհանուր հոգեբանության կառուցվածքը, տարբեր բաժինների զարգացումը և գործառույթները, մեթոդները: 2. տարբերակելու հոգեկանի ակտիվության մակարդակները: 3. պարզաբանելու հոգեկան պարզագույն իմացական գործընթացները և նրանց առանձնահատկությունները: 4. բացատրելու հոգեկան իմացական բարձրագույն գործընթացները և նրանց առանձնահատկություններին: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. մեկնաբանելու անձի հուզականամային ոլորտի նրբությունները: 2. տարբերակելու անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. զարգացնելու սեփական ընդունակությունները, կարողությունները: 2. վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորել հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով: | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ4. ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. քննարկում 3. բանավեճ 4. գործնական պարապմունք 5. ռեֆերատ/էսսե 6. անհատական և խմբային առաջադրանքներ: | |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:</p> | |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Հոգեբանության առարկան, խնդիրները: Թեմա 2. Հոգեբանական հիմնական մեթոդները, բնագավառները: Թեմա 3. Հոգեկանի ռեֆլեկտորային մեկնաբանությունը: Թեմա 4. Հոգեկանի ակտիվության մակարդակները: Թեմա 5. Հոգեկանի և գիտակցության զարգացումը: Թեմա 6. Անձի հոգեբանական բնութագիրը: Թեմա 7. Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները, զարգացումը: Թեմա 8. Անձի իմացական հոգեկան գործընթացները՝ զգայություններ: Թեմա 9. Զգայությունների դասակարգումը, զգայունակություն: Թեմա 10.</p> | |

Ընկալում, ըմբռնում, առանձնահատկությունները: Թեմա 11. Հիշողություն և անձ, տեսակները, գործընթացները: Թեմա 12. Մտածողություն, տեսակները, գործընթացները: Թեմա 13. Երևակայության և պրոբլեմային իրադրություն, տեսակները: Թեմա 14. Անձի հուզականային կողմը: Թեմա 15. Անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է. Հոգեբանություն, դեմքեր, փաստեր/ Ուսումնական ձեռնարկ/, Եր., ԵՊՀ հրատ. 2010:
2. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, Եր.1997:
3. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005:
4. Маклаков А. Г., Общая психология. М., 2007:
5. Немов Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).
6. Столяренко Людмила Дмитриевна, Психологии.учебник для вузов.-СПб.: Питер, 2010.

| | | |
|--|--------------------------------|-----------------|
| 1.0202/B16 | 2.Մշակութաբանության հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Մտուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանություն առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, մշակութային երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու գիտության մեջ «մշակույթ» հասկացության ամենադիպուկ սահմանումները և տեսությունները, 2. սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները, 2. վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան, 3. մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. աշխատելու թիմում, 2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները՝</p> <p>Ա5. գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը և նշանակությունը,</p> <p>Բ5. ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և զբոսաշրջային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա,</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն /ավանդական և ինտերակտիվ/ 2. քննարկում /բանավեճ 3. համագործակցային աշխատանք 4. մտազրոհ 5. վերլուծական մեթոդ: | | |

| |
|---|
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները՝ Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝ Թեմա 1. Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: Թեմա 2. Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: Թեմա 3. Հոգևոր գործունեության մշակութային ձևեր: Կրոն, գիտություն և արվեստ: Թեմա 4. Մշակույթ-բնություն-հասարակություն: Թեմա 5. Նախնադարյան մշակույթ՝ Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): Թեմա 6. Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: Թեմա 7. Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: Թեմա 8. Վերածնունդ և Ռեֆորմացիա: Թեմա 9. Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթ: Թեմա 10. Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթ: Թեմա 11. Հայկական մշակույթ:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ՝ 1. Գևորգյան Հ., Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, Եր., 1997: 2. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Եր., 2000: 3. Սարգսյան Ս.Ա., Մշակութաբանություն, Եր., 1997՝ 4. Սարգսյան Ս.Ա., Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Եր., 2004: 5. Арутюнов С.А., Рыжакова С.И., Культурная антропология, М., 2004. 6. Гуревич П., Культурология, Москва, 2001. 7. Розин В.М., Культурология, М., 1998.</p> |

| | | |
|---|---------------------------|-----------------|
| 1.0303/B16 | 2.Սոցիոլոգիայի հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում՝ Դասընթացի խնդիրները. 1. ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ, 2. ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում՝</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու գիտության մեջ «սոցիոլոգիա» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները, 2. սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները, 2. վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը, 3. մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. աշխատելու թիմում, 2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> | | |

| |
|--|
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Ա6.տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին, մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, սոստեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն), Բ3.կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. քննարկումներ 3. բանավեճեր 4. ռեֆերատներ 5. զեկուցումներ: |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: Թեմա 2. Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: Թեմա 3. Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ: Թեմա 4. Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: Թեմա 5. Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Бабосов Е.М., Прикладная социология. Тетра Системс, 2001. ISBN 985-6577-74-8 2. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Москва Альфа-М; Инфра-М, 2011. 3. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г. 4. Долгоруков А.М., От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011. 5. Ельмеев В.Я., Овсянников В.Г. Прикладная социология Очерки методологии. СПбГУ, 1994 г. (1-е изд.) 6. Кравченко А.И., Прикладная социология и менеджмент Хрестоматия. М. МГУ, 1998. |

| | | |
|--|-----------------------------|-----------------|
| 1.0304/B16 | 2.Տրամաբանության հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսումնասիրել մտածողության օրենքները և կանոնները, սովորեցնել մտածել, կոռեկտ դատել, զերծ մնալ տրամաբանական այն սխալներից: Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ցույց տալ հասկացության և բառի տարբերությունները, 2. ծանոթացնել հասկացության տեսակների, տրամաբանական հնարների հետ, 3. ծանոթացնել տրամաբանության և նախադասության կապին, անդրադառնալ դատողության տեսակներին, տրամաբանության օրենքներին, 4. ծանոթացնել մտահանգման տարբեր տեսակներին և նրանց կանոններին, պարզաբանել ապացուցման և հերքման էությունը, նրանց եղանակները, բացահայտել ապացուցման և հերքման ընթացքում հնարքները, տրամաբանական սխալները: | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. սահմանելու հասկացության, նրա տեսակների, հասկացության ծավալների միջև հիմնական | | |

| |
|--|
| <p>հարաբերությունները, տրամաբանական հնարները,</p> <p>2. մեկնաբանելու դատողության, նրա տեսակների, դատողությունների միջև հիմնական հարաբերությունների, տրամաբանական հիմնական օրենքները,</p> <p>3. սահմանելու մտահանգումը, նրա տեսակները, անհրաժեշտ մտահանգման տեսակները, նրանց կանոնները, ապացուցումն ու հերքումը, նրանց տեսակները, վարկածը, տրամաբանական սխալները:</p> <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>1. բաժանելու, դասակարգելու, տեսակավորելու հասկացությունները, դրանց տեսակները,</p> <p>2. զանազանելու հասկացությունն ու դատողությունը, դատողությունները տեսակավորելու ըստ տարբեր հիմքերի, գործածելու տրամաբանության հիմնական օրենքները,</p> <p>3. զանազանելու մտահանգման տարբեր տեսակները, անսխալ ապացուցել և հերքել:</p> <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <p>1. կառուցելու և հիմնավորելու սեփական մտքերը առանց տրամաբանական սխալների:</p> |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Բ3. կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,</p> <p>Գ6. տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջումները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար,</p> <p>Գ9. վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. դասախոսություն</p> <p>2. քննարկում</p> <p>3. բանավեճ:</p> |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Տրամաբանությունն առարկան և նրա դերն ու նշանակությունը: Թեմա 2. Հասկացություն: Թեմա 3. Դատողություն: Թեմա 4. Տրամաբանության օրենքները: Թեմա 5. Մտահանգում: Թեմա 6. Ապացուցում և հերքում: Թեմա 7. Պարալոգիզմ, սոփեստություն, սրամտություն, պարադոքս: Հիպոթեզ:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <p>1. Բրուսյան Գ., Տրամաբանության դասընթաց, Եր., 1976:</p> <p>2. Кондаков Н., Логический словарь, Москва, 1975.</p> <p>3. Гетманов А., Логика, Москва, 1993.</p> <p>4. Маковелский А., История логики, Москва, 1967.</p> <p>5. Демидов И., Логика, Москва, 2004:</p> |

| | | |
|---|------------------------------|-----------------|
| 1.0304/B16 | 2.Քաղաքագիտության հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> | | |

| |
|--|
| <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները, 2. ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները, 3. ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը: |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները, 2. ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները, 3. թվարկելու ու մեկնաբանելու պետական կառավարման ձևերը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները, 2. մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը, 3. մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 2. աշխատելու թիմում: |
| <p>10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա3.բացահայտելու զբոսաշրջության առանձնահատկությունները և զարգացումները տարածաշրջանային ու տեղական մակարդակներում,</p> <p>Գ3.կատարելու թիմային աշխատանք,</p> <p>Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքերի իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. քննարկումներ 3. բանավեճեր 4. զեկուցումներ: |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.</p> <p>Թեմա 1. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: Թեմա 2. Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: Թեմա 3. Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: Թեմա 4. Քաղաքական ընտրանի /էլիտա/: Թեմա 5. Քաղաքական լիդերություն: Թեմա 6. Քաղաքական ռեժիմներ: Թեմա 7. Հասարակության քաղաքական համակարգը: Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: Թեմա 8. Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Թեմա 9. Քաղաքացիական հասարակություն: Թեմա 10. Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: Թեմա 11. Ընտրություններ և ընտրական համակարգեր: Թեմա 12. Գաղափարա-խոսությունների տեսություն: Թեմա 13. Ազգեր և ազգային քաղաքականություն: Թեմա 14. Քաղաքականությունը և կրոնը: Թեմա 15. Քաղաքական մշակույթ:</p> |
| <p>14.Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Քաղաքագիտություն, Եր., 2006: 2. Буренко В., Журавлев В.В., Политология, М., 2004. 3. Гаджиев К., Политология. М., 2005. |

4. Политология. Под ред. А.А. Радугина. М., 1999.
5. Пушкарева Г., Политология, М., 2002.
6. Мальцев В., Основы политологии, М., 1998.

| | | |
|--|---------------|-----------------|
| 1.0305/B17 | 2.Անգլերեն -3 | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 Ժամ/շաբ. | 5.0/30/0 | |
| 6.3/4-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը, 2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները, 3. զարգացնել անգլերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները, 4. զարգացնել անգլերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան: | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու անգլերենի բառակազմության միջոցները: 2. կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում: 3. գործածելու անգլերենին բնորոշ խոսակցական կառույցներ՝ <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները: 2. վարելու զրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ՝ 3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ունկնդրելու և վերարտադրելու զրույց/երկխոսություն: 2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ: 3. բանավիճելու մասնագիտական թեմաներով: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա1.պարզաբանելու զբոսաշրջության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, տեսությունները:</p> <p>Գ2. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:</p> <p>Գ6.տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> | | |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեատ 4. ռեֆերատ 5. զրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք | | |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգվելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց</p> | | |

| |
|---|
| բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված: |
| 13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Ընդհանուր անգլերեն՝ շեշտադրելով բառապաշարի ընդլայնումը: Թեմա 2. Խոսակցական անգլերենին բնորոշ կառույցների ուսուցում: Թեմա 3. Բանավոր խոսք՝ ուղղված ուսանողների մասնագիտական գիտելիքների, վերլուծական ունակությունների խթանմանը: |
| 14.Հիմնական գրականության ցանկ. 1. Harutyunyan K., Mkrtchyan H., Bagumyan L., Do you Speak English? Yerevan, Lusakn, 2015. 2. Mkhitaryan K., Gevorgyan A., Develop Your Vision of English. Yerevan: Antares, 2017. 3. Vince M., First Certificate Language Practice. USA: Macmillan, 2010. 4. Alexander L.G., Fluency In English, Longman, 1967. 5. Alexander L.G., For and Against, Longman, 1969. |

| | | |
|--|---|-----------------|
| 1.0105/B17 | 2.Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3/4-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորել բնագիտական աշխարհայացք, 2. ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը, 3. բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները, 4. ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին: | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը, 2. ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքներին, 3. մեկնաբանելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում, 2. կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին, 3. կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու թիմային աշխատանքի ընթացքում հստակ սեփական միտքը, 2. օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան, | | |

| | | |
|--|--|--|
| <p>3. ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:</p> | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Բ2. իրականացնելու տուրիստական գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում, Բ3. կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, Գ9. վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. խոսքային մեթոդները (դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը), 2. գործնական մեթոդները (վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը), 3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա), 4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական - ցուցադրական, պրոբլեմային - որոնողական), 5. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային և խմբային աշխատանքներ), 6. քննադական մտածողության մեթոդները, 7. խմբային աշխատանքի մեթոդները, 8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները, 9. վերահսկողության մեթոդները (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն): | | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացի շրջանակում: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին՝ նա ստանում է ստուգված:</p> | | |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: Թեմա 2. Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: Թեմա 3. Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: Թեմա 4. Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: Թեմա 5. Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: Թեմա 6. Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: Թեմա 7. Էվոլյուցիոն կենսաբանության կոնցեպցիաները:</p> | | |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Ասլանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, Եր., 2007: 2. Канке В.А., Концепции современного естествознания, Логос. М., 2002. 3. Концепции современного естествознания, Питер 2008, (Под.редакц. Л.А.Михайлова). | | |

| | | |
|--|------------------------------|-----------------|
| 1.0201 / B17 | 2. Կիրառական վիճակագրություն | 3.2 ECTS կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. 30/0/0 | |
| 6. 3/4-րդ կիսամյակ | 7. Ստուգարք | |
| <p>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմունքներին որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մասի, ուսանողներին մոտ ձևավորել վերացական մտածողություն:</p> | | |

| |
|---|
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</p> <ol style="list-style-type: none"> ներկայացնելու կիրառական վիճակագրության որոշ հարցերի: ճիշտ մշակելու վիճակագրական տվյալները միջին քառակուսային շեղում, մոդա, մեդիանա հաշվելու հմտություններ: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</p> <ol style="list-style-type: none"> դիսկրետ պատահական մեծության հենքի վրա դասակարգելու թվային բնութագրիչներ՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում, մոդա, մեդիանա՝ նկարագրական վիճակագրության գործնականում իրականացնելու հետազոտական աշխատանքի ճիշտ պլանավորում: մոդելավորելու առօրեական բնույթի որոշ խնդիրներ և լուծել: գործնականում իրականացնելու հետազոտման մեթոդի ճիշտ ընտրություն՝ <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</p> <ol style="list-style-type: none"> աշխատելու հետազոտական խմբում, կիրառելու գիտելիքները պրակտիկայում: վերլուծելու վիճակագրական խնդիրները և առաջարկել լուծման եղանակներ: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Ա4. վերլուծելու զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը:</p> <p>Գ1. կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> <p>Գ8. կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p> <p>Գ9. վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. Դասախոսություններ դիդակտիկ նյութերի կիրառմամբ (համակարգիչ, աղյուսակներ և այլն)</p> |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգաբքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգաբքը համարվում է հանձնված</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Դիսկրետ պատահական մեծության թվային բնութագրիչներ՝ մաթեմատիկական սպասում, դիսպերսիա, միջին քառակուսային շեղում, մոդա, մեդիանա՝ Թեմա 2. Նկարագրական վիճակագրություն՝ Թեմա 3. Նմուշահանում դիսկրետ և անընդհատ հատկանիշի դեպքում՝ Թեմա 4. Գնահատման տեսություն՝</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրանգիրք, ԵՊՀ հրատ., Եր., 2016. 154 էջ: Գասպարյան Կ.Վ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 208 էջ: Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, Եր. Գիտություն., 2000, 298 էջ.: Համբարձումյան Գ.Հ. «Հավանականությունների տեսություն» Եր.: «Լույս հրատարակչություն» 1977, 400 էջ Ивченко Г. И., Медведев Ю. И., Математическая статистика, М., кн. дом Либроком, 2014. 352 с. Гмурман В.Е. «Руководство к решению задач по теории вероятностей и математической статистике» М.: Высш. школа, 2000, 400 с. |

| | | |
|--|------------------------------|-----------------|
| 1.0305/B17 | 2.Հաղորդակցման հմտություններ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 Ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6. 3/4-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար:</p> <p>Դասընթացի խնդիրները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Նպաստել սովորողների քննադատական մտածողության ձևավորմանը՝ ստեղծելով ինքնուրույն որոշումներ կայացնելու, բազմաթիվ կարծիքների ու տեսակետների նկատմամբ հարգանք ունենալու, արդյունավետ հաղորդակցվելու մթնոլորտի զարգացմանը: 2. ուսումնասիրել լեզվի կիրառական և հաղորդակցային հնարավորությունները, 3. բացահայտել խոսքի ընդհանուր օինաչափությունները, 4. դրսևորել գրական խոսքի բարձր մշակույթ, 5. հարստացնել ու զարգացնել լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները: | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու լեզվի կիրառական և հաղորդակցական հնավորությունները. 2. լուսաբանելու լեզվի դերը որպես հաղորդակցական միջոց, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. տիրապետելու որոշակի աշխատանքային հմտությունների և տարբեր միջավայրերում քաղաքակիրթ, բարյացակամ հաղորդակցվելու ունակությունների: 2. ընտրելու հաղորդակցման համար անհրաժեշտ լեզվաոճական միջոցներ. <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. դրսևորելու լեզվական բաձր մշակույթ, հարուստ բառապաշար, լայն աշխարհայացք, մասնագիտական էթիկա, հանրության հետ հաղորդակցվելու ունակություններ: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները</p> <p>Գ1.Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությում:</p> <p>Գ2.Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> | | |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. Պասիվ դասխոսություն 2. Ակտիվ դասխոսություն <ul style="list-style-type: none"> ✓ հարցուպատասխան ✓ զրույց 3. Բնտերակտիվ դասխոսություն <ul style="list-style-type: none"> ✓ «PowerPoint» համակարգչային ծրագրով տեսադրվագաշարերի ցուցադրում ✓ հարցուպատասխան ✓ բանավեճ ✓ զրույց | | |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգարք. վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար անց է կացվում բանավոր հարցում:</p> | | |
| <p>13.Համառոտ բովանդակություն.</p> <p>Թեմա 1. Հաղորդակցության դերն ու նշանակությունը: Թեմա 2. Հաղորդակցման խոչընդոտները. գործնական հաղորդակցում: Թեմա 3. Հաղորդակցման դասակարգումները: Թեմա 4. Ուղղակի և անուղղակի հաղորդակցման ձևերը:</p> | | |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Ավետիսյան Յու., Պաշտոնական գրագրություն, Երևան, 2001: 2. Գաբրիելյան Յու., Լեզվական հաղորդակցության տեսություն, Երևան, 2018: | | |

3. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Երկրորդ հրատարակություն, Երևան, 2009:
4. Պետրոսյան Ա., Գործարար հաղորդակցություն, Երևան, 2003թ.:
5. Պետրոսյան Հ., Մարտիրոսյան Ա., Գործարար և գիտական հայոց լեզու, Երևան, 2015:
6. Քարնեգի Դ., Ինչպե՞ս ձեռք բերել բարեկամներ և ինչպես ազդել մարդկանց վրա, 1936:

| | | |
|--|----------------------------|-----------------|
| 1.0105 / B17 | 2. Մաթեմատիկայի հիմունքներ | 3.2 ECTS կրեդիտ |
| 4. 2 ժամ/շաբ. | 5. 30/0/0 | |
| 6. 3/4-րդ կիսամյակ | 7. Ստուգարք | |
| <p>8. Ծրագիրը նպատակ ունի.</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողներին ծանոթացնել մաթեմատիկայի հիմունքներին՝ որպես ընդհանուր մշակույթի բաղկացուցիչ մասի, • ուսանողներին մոտ ձևավորել վերացական մտածողություն: | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.</p> <ul style="list-style-type: none"> • Կտիրապետի հանրակրթական և հանրամատչելի բնույթի մաթեմատիկական որոշ հարցերի: • Կունենա թվային տվյալները ճիշտ մշակելու, մասնագիտական վերլուծությունները գրաֆիկների, սանդղակների, մասերով արտահայտել տոկոսների միջոցով պատկերավորելու հմտություններ: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ.</p> <ul style="list-style-type: none"> • Տարրական ֆունկցիաների հենքի վրա դասակարգել ֆունկցիաները, սահմանել ֆունկցիայի անընդհատությունը ,հաշվել նրա սահմանը: • գործնականում իրականացնել հետազոտական աշխատանքի ճիշտ պլանավորում, • գործնականում իրականացնել հետազոտման մեթոդի ճիշտ ընտրությունը՝ <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.</p> <ul style="list-style-type: none"> • աշխատել հետազոտական խմբում, • կիրառել գիտելիքները պրակտիկայում: • վերլուծել խնդիրները և առաջարկել լուծման եղանակներ: | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Գ1. կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. Դասախոսություններ դիդակտիկ նյութերի կիրառմամբ (համակարգիչ, աղյուսակներ և այլն)</p> | | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված՝</p> | | |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <ol style="list-style-type: none"> 1. Մաթեմատիկա առարկան և մաթեմատիկական լեզու: 2. Բազմությունների տեսության տարրեր և թվային բազմություններ՝ 3. Ոչ էվկլիդեսյան երկրաչափություն: Վեկտորական հաշիվ՝ 4. Տեքստային խնդիրներ(տոկոսի, խառնուրդների և շարժման խնդիրներ) 5. Հանրահաշվական կորեր(ուղիղ գիծ, շրջանագիծ)՝ 6. Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրության տարրեր՝ | | |

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Աթաբեկյան Վ. և ուրիշներ, Մաթեմատիկա հումանիտար մասնագիտությունների համար, ԵՊՀ, Երևան, 2004:
2. Тихомиров Н. Б., Шелехов А. М., Математика, Учебный курс для юристов, Москва, Юрайт, 2000.
3. Քարտաշյան Ա.Հ. Մաթեմատիկա Երևան. Լույս, 1983
4. Стойлова Л.П. Математика Москва, Академия, 2007
5. Лавров И.А.,Максимова Л.Л. Задачи по теории множеств, математической логике и теории алгоритмов Москва, Физматлит 1995

| | | |
|--|----------------------|------------------|
| 1.0302/B17 | 2.Մեդիագրագիտություն | 3. 2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6. 3/4-րդ կիսամյակ | 7.Ստուգարք | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողին ներկայացնել հասարակության և մեդիայի փոխհարաբերությունները, դրանց առանձնահատկությունները, ծանոթացնել մեդիայի կողմից հանրային կարծիքի, սոցիալական դիրքորոշման, արժեհամակարգի ձևավորման մեխանիզմներին, ուսումնասիրել հասարակական գիտակցության և մեդիամիջավայրի փոխազդեցությունների շրջանակը, հասկանալ դրանց նախադրյալները և հետևանքները::</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. հիմնավորելու մեդիայի և տեղեկատվական հասարակության էությունը, դրանց հետ կապված հասկացությունները և հիմնական տեսությունները, 2. որոշելու մեդիայի արժեքաստեղծ գործառույթը, վերջինիս միջոցով հասարակական արժեքների ձևավորման փուլերը, 3. մատնանշելու սոցիալական դիրքորոշման փոփոխման մեխանիզմները՝ մեդիայի դերն ավելի ամբողջական պատկերացնելու համար, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. տարբերակելու մեդիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը, 2. գնահատելու տեղեկատվական հասարակության հայաստանյան յուրահատկությունները, 3. հետազոտության ժամանակակից մեթոդներով համեմատելու մեդիատեսակները (մեդիա) ըստ իրենց ազդեցիկության աստիճանի, 4. տարբերակելու ամբոխի կարգավորման/մանիպուլացման մեխանիզմներն ու հնարքները կոնկրետ դեպքերում, <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. արժևորելու և քննադատական մոտեցում ցուցաբերելու մեդիաարտադրանքին, 2. սեփական հետազոտություններում մեթոդաբանական սկզբունքներով համակարգելու մեդիաազդեցության մեխանիզմները՝ | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի,</p> <p>Գ2. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությունում:</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ9.վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p> | | |

| |
|--|
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. գործնական պարապմունք 3. ինքնուրույն խատանքներ |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Ստուգարքն անց է կացվում բանավոր:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հասարակության կառուցվածքը: Հասարակություն և անհատ: Թեմա 2. Մեդիա և մեդիամիջավայր: Մեդիայի հաղորդակցային և գաղափարական բնույթը: Թեմա 3. Տեղեկատվական հասարակություն. ձևավորման նախադրյալները: Թեմա 4. Հասարակական գիտակցություն-մեդիամիջավայր. փոխադարձ ազդեցության բնույթը: Թեմա 5. Հասարակական գիտակցության մանիպուլյացիա: Թեմա 6. Մեդիա և արժեքներ. մեդիայի արժեքաստեղծ գործառույթը:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Morin E., Au-delà de la globalisation et du développement, société-monde ou empire-monde ? », La revue du MAUSS, 20, pp. 43-53, 2002. 2. Назаров М. М., Массовая коммуникация и общество. Введение в теорию и исследования. — М.: «Аванти плюс», 2003. 3. Полицарпова Е.В., Аксиологические Функции Масс-Медиа В Современном Обществе, Ростов-на-Дону, 2002. |

| | | |
|--|------------------|-----------------|
| 1.0305/B17 | 2.Ռուսաց լեզու-3 | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.0/30/0 | |
| 6.3/4-րդ կիսամյակ | 7.ստուգարք | |
| <p>8. Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ բանավոր խոսքի ունակություններ:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. խորացնել և հարստացնել ուսանողների խոսակցական բառապաշարը, 2. ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները, 3. զարգացնել ռուսերենի ուղղախոսության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները, 4. զարգացնել ռուսերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան: | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու ռուսերենի բառակազմության միջոցները: 2. կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում: 3. գործածելու ռուսերենին բնորոշ խոսակցական կառույցներ <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները: 2. վարելու զրույց/երկխոսություն՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոններ 3. արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ունկնդրելու և վերարտադրելու զրույց/երկխոսություն: 2. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ: 3. բանավիճելու մասնագիտական թեմաներով: | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Գ2. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցված բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ,</p> | | |

| |
|---|
| <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, Գ9. վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. զրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք</p> |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Շարահյուսություն: Թեմա 2. Ուղղագրության հիմնական կանոնները: Թեմա Մասնագիտական տեքստ:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ. 1. Русский язык. Под общ. ред. к. ф. н. доцента Лалаян С. А. Ер., изд-во ЕГУ, 2018. 2. Русский язык. Под общ. ред. Л. М. Мкртчяна. Ер., изд-во ЕГУ, 2004. 3. Учебник по русскому языку. Грамматика. Коммуникация Речь., П. Б. Балаян, Л. А. Тер-Саркисян, Б. С. Ходжумян. Ереван, изд-во ЕГУ, 2015. 4. Учебные пособия по специальности.</p> |

| | | |
|---|--|------------------|
| 1.0104/ B17 | 2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ | 3. 2 ECTS կրեդիտ |
| 4.2 Ժամ/շաբ. | 5.0/30/0 | |
| 6.3/4-րդ կիսամյակ | 7. Ստուգարք | |
| <p>9. Դասընթացի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ համակարգիչների տեխնիկական և ծրագրային նպահովման մասին, զարգացնել համակարգչից օգտվելու հմտություններ, որոնք կկիրառվեն ուսումնառության ընթացքում, առօրյայում, շարունակական կրթության ընթացքում, ստեղծել անհրաժեշտ հիմքեր համակարգչի օգնությամբ մասնագիտության մեջ գործնական հետազոտություններ ու վերլուծություններ կատարելու համար: <u>Դասընթացի խնդիրները.</u></p> <ol style="list-style-type: none"> ուսանողներին ծանոթացնել համակարգչի կառուցվածքին, համակարգային և կիրառական ծրագրերին, մեկնաբանել փաստաթղթերի գեղարվեստական ձևավորման ոճերը, շրիֆտատեսակները, խմբագրման հնարավորությունները, բացահայտել ժամանակակից համակարգչի դերն ու կարևորությունը հումանիտար մասնագիտությունների մեջ, կատարել տրամաբանական արտահայտություններ Excel համակարգով խնդիրներ լուծելու համար, ըստ կատարած հաշվարկների ստացված տվյալների կառուցել գրաֆիկներ, տեսակավորել: | | |
| <p>10. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. թվարկելու համակարգչի կառուցվածքը և նշելու աշխատանքի հիմնական սկզբունքները:</p> | | |

| |
|---|
| <p>2. ընտրելու ոճեր, շրիֆտատեսակներ, շաբլոններ word տեքստային խմբագրով փաստաթղթեր ձևավորելու համար:</p> <p>3. վերարտադրելու և ստեղծելու էլեկտրոնային աղյուսակ:</p> <p>4. ընտրելու և ներկայացնելու Power Point համակարգի հնարավորությունները:</p> <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>1. օգտագործելու օպերացիոն համակարգի հնարավորությունները:</p> <p>2. կատարելու իր թղթավարությունը Microsoft Word տեքստային խմբագրիչով:</p> <p>3. էլեկտրոնային աղյուսակով կատարելու հաշվարկային աշխատանքներ՝ կիրառելով ստանդարտ ֆունկցիաներ և տրամաբանական գործողություններ:</p> <p>4. կիրառելու Power Point ծրագիրը զեկուցումների, ռեֆերատների, կուրսային և ավարտական աշխատանքների ցուցադրման համար:</p> <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <p>1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> |
| <p>11.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջարդյունքները. Բ3.կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, Գ5.կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, դեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ8.կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:</p> |
| <p>12. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. գործնական աշխատանքներ:</p> |
| <p>13. Գնահատման մեթոդները և չափանիշները Թեստը, առաջադրանքը, խնդիրը կամ ռեֆերատը գնահատվում է «ստուգված», եթե կատարել է 50% և ավելի: Ուսանողը.</p> <ul style="list-style-type: none"> • շնորհանդեսի ուղեկցությամբ Power Point ծրագրով ներկայացնում է հանձնարարված ինքնուրույն աշխատանքները, • հանձնում է ուսումնառության ողջ ընթացքում ստացած գիտելիքների վերաբերյալ ռեֆերատը, • տեղում կատարում է առաջադրանք, որը բաղկացած է MS Word և Excel – ծրագրերի թեստերից: |
| <p>14.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները. Համակարգչի կառուցվածքը և աշխատանքի հիմնական սկզբունքները: ԷՀՄ-ի հիմնական հանգույցները. հիշասարք,պրոցեսոր, ներածման և արտածման սարքեր:ԷՀՄ-ի ծրագրային ապահովումը: Ֆայլ, ֆայլի անվանում. Ֆայլի ճանապարհ: Հիշողության չափման միավորները: Թեմա 2. Microsoft Word փաստաթղթերի ստեղծում և ձևավորում. Փաստաթղթերի ստեղծում և ձևավորում: Տառի բնութագրերը:WordArt-ի տեղադրում: Նրա հետ աշխատելու գործիքներ: Formatting պանելի գործիքները: Աշխատանք Tab-երի հետ:Պարագրաֆ, նրա բնութագրերը: Էջի պարամետրերի տեղադրում: Եզրագծերի և ֆոնի տեղադրում, տեքստերի խմբագրում (բլոկների պատճենում, տեղափոխում, տեղադրում): Փաստաթղթերի նախնական դիտարկում և տպում: Տեքստերի սխալների ուղղում, որոնում, փոխարինում: Էջի համարների տեղադրում: Drawing ռեժիմ: Աշխատանք Autoshapesերի հետ: Աղյուսակների տեղադրում:: Թեմա 3. Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակներ Microsoft Excel էլեկտրոնային աղյուսակային համակարգի պատուհանի կառուցվածքը: Բջիջներ: Տվյալների ներմուծում, խմբագրում, ֆորմատավորում: Բջջի հասցեների տիպերը: Ներմուծման ավտոմատացում: Տրամաբանական գործողություններ, ֆունկցիաներ: Տվյալների տեսակավորում՝ Filter, Sort ռեժիմները: Թեմա 4. Microsoft PowerPoint ներկայացման ստեղծում:</p> |

Ներկայացումները հաստատվում են: Անիմացիաների և ոճերի հաղորդում սահիկներին: Չայնային, լուսային ոճերի հաղորդում սահիկներին: Դիզայնի ձևավորում: Ավտոմատացնել սահիկներին միջև անցումը: Ներկայացումն ինտեգրել այլ թվայնացված միջոցների հետ:

14. Հիմնական գրականության ցանկ.
 1. Հովակիմյան Ա., Սարգսյան Ս., Խաչոյան Լ., Իսպիրյան Ն., Մանուկյան Ա., Մկրտչյան Ն., Համակարգչային գրագիտություն, Մեթոդական ձեռնարկ, Եր., 2012:
 2. А.Тихомиров, Прокди А.К., Колосков П.В., Клендрова И.А. и др., MicrosoftOffice 2007, Наука и Техника, Эл. Книга, 2008.

| | | |
|--|---|-----------------|
| 1.0304/B17 | 2. Քննական և ստեղծագործական մտածողություն | 3.2 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.30/0/0 | |
| 6.3/4-րդ կիսամյակ | 7. ստուգարք | |
| <p>8. Դասընթացի նպատակն է ներկայացնել քննական և ստեղծագործական մտածողության առանձնահատկությունները, ուսանողների մոտ ձևավորել ստեղծագործական և քննական մտածողություն:</p> <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. սահմանելու քննական և ստեղծագործական մտածողությունը 2. մեկնաբանելու քննական և ստեղծագործական մտածողության հիմնական սկզբունքներն ու հատկանիշները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կիրառելու քննական և ստեղծագործական մտածողության գործիքները: 2. մեկնաբանելու քննական մտածողության տեսակները: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ:</p> <p>10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները. Ա3. բացահայտելու զրոսաշրջության առանձնահատկությունները և զարգացումները տարաշրջանային և տեղական մակարդակներում՝ Գ4. ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքերի իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը: Գ5. կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար: Գ9. վերլուծելու և եզրահանգումներ անելու դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. անհատական և խմբային առաջադրանքներ 2. ընթերցանություն 3. թեստ 4. ռեֆերատ 5. զրույց լեզվակրի հետ 6. շնորհանդես 7. ինքնուրույն աշխատանք</p> | | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են. Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց</p> | | |

| |
|---|
| <p>բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:</p> <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից. Թեմա 1. Ստեղծագործական և քննական մտածողության սահմանումը: Թեմա 2. ստեղծագործական և քննական մտածողության կարևորությունը: Թեմա 3. ստեղծագործական և քննական մտածողության զարգացման փուլերը: Թեմա 4. Ստեղծագործական և քննական մտածողության խրախուսման մեթոդները: Թեմա 5. Քննական և ստեղծագործական մտածողության հմտությունների զարգացման մոտեցումները: Թեմա 6. Ստեղծագործական և քննական մտածողության զարգացման գործիքները: Թեմա 7. Քննական մտածողության տեսակները: Թեմա 8. Ստեղծագործական մտածողության սկզբունքները, հիմնական հատկանիշները:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Бутенко А. В., Ходос Е. А. Критическое мышление: метод, теория, практика. Учеб.-метод. пособие. М.: Мирос, 2002. — 176 с. 2. Ивунина Е. Е. О различных подходах к понятию «критическое мышление» // Молодой учёный. — 2009. — № 11. — С. 170—174. 3. Турчин В. Ф. Феномен науки. Кибернетический подход к эволюции. — Изд. 2-е — М.: Словарное издательство ЭТС. — 2000. — 368 с. 4. Халперн Д. Психология критического мышления. — СПб.: Петербург, 2000. — 512 с. |

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ
(ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ)

| | | |
|---|-------------------------------------|-----------------|
| 1.0202/B18 | 2.Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն | 3.6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.30/0/30 | |
| 6.1-ին կիսամյակ | 7.Առանց եզրափակիչ գնահատման | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ համապարփակ գիտելիքներ հասարակական (սոցիալ-տնտեսական) աշխարհագրության ձևավորման և զարգացման հիմնարար հասկացությունների, բաղադրիչների հետազոտության մեթոդների մասին:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու և սահմանելու աշխարհագրության միասնական գիտության համակարգում «հասարակական աշխարհագրության» տեղը և դերը, 2. ներկայացնելու հասարակական աշխարհագրության ձևավորումը և զարգացում, 3. բացատրելու և մեկնաբանելու հասարակական աշխարհագրության հիմնարար հասկացությունները և բաղադրիչները: <p>բ.գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կիրառելու հասարակական աշխարհագրական հետազոտության և սոցիալ-տնտեսաաշխարհագրական կանխատեսման մեթոդները, 2. կատարելու սոցիալ-տնտեսաաշխարհագրական կանխատեսում, 3. տեղայնացնելու մարդկության համամոլորակային ընդհանրական հիմնախնդիրները: <p>գ.ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. աշխատելու թիմում, 2. կատարելու առաջարկություններ, 3. փաստերի վերլուծության հիման վրա կատարելու եզրահանգումներ և ընդհանրացումներ՝ | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Ա4.վերլուծելու զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը,</p> | | |

| | | |
|---|--|--|
| <p>Բ4. գնահատելու զբոսաշրջության ռեսուրսները և ենթակառուցվածքները, Գ1. կիրառելու սոցիալ-աշխարհագրական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. խոսքային մեթոդներ, 2. սեմինար պարապմունքներ, 3. դիդակտիկ նյութերի ցուցադրում, 4. պրոբլեմային-որոնողական, 5. ինտերակտիվ-կառուցողական մեթոդներ: | | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները. Նախատեսվում է</p> <ul style="list-style-type: none"> ✓ 2 ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրն առավելագույնը 4 միավոր, ընդամենը՝ 8 միավոր: ✓ Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 8 միավոր: ✓ Ընթացիկ ստուգումներ՝ առավելագույնը՝ 4 միավոր: <p>1-ին ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով: 2-րդ ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է:</p> | | |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Դասընթացի ուսումնասիրության նպատակը և խնդիրները՝ Դասընթացի համառոտ բովանդակությունը և կառուցվածքը, գրական աղբյուրների տեսություն: Թեմա 2. Հասարակական աշխարհագրության ձևավորումը և զարգացումը: Թեմա 3. Հասարակական աշխարհագրության հիմնարար հասկացությունները: Թեմա 4. Հասարակական աշխարհագրության բաղադրիչները: Թեմա 5. Հասարակական աշխարհագրության հետազոտության մեթոդները: Թեմա 6. Սոցիալ-տնտեսաաշխարհագրական կանխատեսում: Թեմա 7. Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները և հասարակական աշխարհագրության խնդիրները</p> | | |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Ավագյան Ա., ՀՀ ընդերքի ռեսուրսները (աշխարհագրական վերլուծություն) Եր., 2000: 2. Պոտոսյան Ա., ՀՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 2022թ.: 3. Վալեյան Լ., Հասարակական աշխարհագրության ներածություն, Եր., 1999: 4. Վալեյան Լ, Հայկական ՄՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., 1988: 5. Մելքունյան Ս, Հայաստանի հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական աշխարհագրություն, Եր., 1999: 6. Սաուշկին Յու., Տնտեսական աշխարհագրության ներածություն, Եր. 1974: 7. Алисов Н., Хорев Б., Экономическая и социальная география мира. Общий обзор.-М., 2000. 8. Максаковский В., Географическая картина мира. Кн.1и2.,М.,005. 9. Гладкий Ю., Сухоруков В., Общая Экономическая и социальная география зарубежных стран., М.:2006. 10. Кусков А.С., Понукалин О.В., Социально-экономическая и политическая география мира и России.-М.,2005. 11. Лопатников Д., Экономическая география и регионалистика.-М.,2004. 12. Максаковский В., Географическая картина мира. Кн.1и2.,М.:2005. 13. Социально-экономическая география зарубежных стран. Под ред.Вольского В.В.-М.:2005 | | |

| | | |
|--------------|-----------------------------|-----------------|
| 1.0202/B19. | 2.Մարդը և նրա պահանջումները | 3.3 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.15/0/15 | |

| 6.1-ին կիսամյակ | 7.Առանց ընթացիկ քննությունների գնահատման |
|--|--|
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ մարդու, նրա էության և պահանջմունքների, անհատի և հասարակության պահանջմունքների բավարարման մեթոդների, սերվիսի բովանդակության, անհրաժեշտության, գործնական նշանակության մասին:</p> | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. թվարկելու և նկարագրելու մարդու պահանջմունքները և դրանց բավարարման մեթոդները, 2. մեկնաբանելու սերվիսի ոլորտը և նրա առանձին բաղադրիչների դերն ու անհրաժեշտությունը մարդու պահանջմունքների բավարարման գործում, 3. պլանավորելու սերվիսի ձեռնարկության գործունեությունը՝ ծառայությունների շուկայի ենթակառուցվածքի և սպառողի պահանջմունքների փոփոխություններով պայմանավորված, այդ թվում՝ սոցիալական քաղաքականության հաշվառմամբ: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ընդունելու հարգելու այլ ժողովրդների սովորություններն ու մշակույթը, 2. իրականացնելու միջմշակութային հաղորդակցություն զբոսաշրջային ինդուստրիայում, 3. գնահատելու իրապագա մասնագիտության սոցիալական ներքին: <p>գ. ընդհանրական փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. աշխատելու թիմում, 2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը, 3. դրսևորելու քննադատական մտածողություն: | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա5.գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը և նշանակությունը,</p> <p>Բ2.իրականացնելու տուրիստական գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում,</p> <p>Բ5.ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և զբոսաշրջային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա.</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություններ, 2. լսարանային ցուցադրություններ 3. ինքնուրույն առաջադրանքի կատարում, 4. ինտերակտիվ-կառուցողական մեթոդ, 5. նախադեպերի վերլուծություն: | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Նախատեսվում է</p> <ul style="list-style-type: none"> ✓ Եզրափակիչ քննություն՝ առավելագույնը 9 միավոր: ✓ Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 8 միավոր: ✓ Ընթացիկ ստուգումներ՝ առավելագույնը՝ 3 միավոր: | |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Դասընթացի նպատակը, առարկան և ինդիքները, կապը այլ գիտությունների հետ:</p> <p>Թեմա 2. Մարդը և նրա էությունը: Թեմա 3. Մարդու պահանջմունքները: Թեմա 4. Սերվիսը որպես մարդու պահանջմունքների բավարարման միջոց: Թեմա 5. Սերվիսի դերը, զարգացման նախադրյալները: Թեմա 6. Սերվիսային ծառայության որակը: Թեմա 7. Սերվիսային գործունեությունը որպես տնտեսության բաղկացուցիչ մաս: Թեմա 8. Սերվիսային գործունեության կապը աշխարհագրական և ժողովրդագրական գործոնների հետ: Թեմա 9. Սերվիսային գործունեությունը որպես մշակույթի բաղկացուցիչ մաս: Սերվիսի ոլորտի կառավարումը: Թեմա 10. Զբոսաշրջությունը որպես մարդու պահանջմունքների բավարարման համակարգի բաղադրիչ: Թեմա 11. Սերվիսի դերը կայուն զարգացման մեջ:</p> | |

14. Հիմնական գրականության ցանկը

1. Ավագյան Ա., Սերվիսագիտության հիմունքներ, Եր., 2017:
2. Аванесова Г., Сервисная деятельность: Учебное пособие для студентов вузов.М.: Аспект Пресс, 2004.
3. Коноплева А., Сервисология (Человек и его потребности), М.:2008.
4. Нюренбергер Л.Б. Сервисная деятельность., Новосибирск, 2008
5. Человек и его потребности. Сервисология: Учебник /И.Н.Лукиянчук,О.А.Ульяновская., М.,2012.
6. Романович Ж., Калачев С., Сервисная деятельность. Учебник,М.:2008.
7. Свириденко Ю.П., Хмелев В.В. Сервисная деятельность в обслуживании населения., М., 2012 220с.

| | | |
|---|-----------------------------|------------------|
| 1.0202/B20 | 2. Երկրագիտություն | 3. 6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.30/30/0 | |
| 6.1-ին կիսամյակ | 7.Առանց եզրափակիչ գնահատման | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մոտ ձևավորել կայուն գիտելիքներ Երկիր մոլորակի և նրա աշխարհագրական թաղանթի ու նրա ոլորտների ձևավորման, զարգացման , նրանցում տեղի ունեցող բազմաթիվ բնական երևույթների փոխադարձ կապի, մարդու և աշխարհագրական թաղանթի, ինչպես նաև բնական երևույթներն ու օբյեկտները սպասարկման և ռեկրեացիոն նպատակներով օգտագործելու համար:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. թվարկելու բնական աշխարհագրության առանձին ոլորտներն ու նրանցում տեղի ունեցող երևույթները, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. բացատրելու մասնագիտության առնչվող աշխարհագրական կարևոր հասկացություններին, աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող բնածին և մարդածին երևույթները, 2. ստացած գիտելիքներն օգտագործելու հասարակական աշխարհագրություն առարկան ուսումնասիրելիս, <p>գ.ընդհանրական փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. փաստերի վերլուծության հիման վրա կատարելու եզրահանգումներ և ընդհանրացումներ: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. Ա4.վերլուծելու զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը, Ա6.տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին, մոտեցումները դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն):</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն 2. քննարկում /բանավեճ 3. համագործակցային աշխատանք 4. վերլուծական մեթոդ: | | |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները Նախատեսվում է</p> <ul style="list-style-type: none"> ✓ 2 ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրն առավելագույնը 4 միավոր, ընդամենը՝ 8 միավոր: ✓ Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 8 միավոր: ✓ Ընթացիկ ստուգումներ՝ առավելագույնը՝ 4 միավոր: | | |

| |
|--|
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1՝ Ընդհանուր երկրագիտություն առարկան, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և կարևոր հասկացությունները: Թեմա 2՝ Հիմնական տվյալներ Երկիր մոլորակի մասին: Թեմա 3՝ Կողմնորոշում, եղանակները, ազիմուտ: Մասշտաբ, աշխարհագրական քարտեզ, տիպերը: Թեմա 4՝ Երկրի ձևը, մեծությունը: Երկրի օրական և տարեկան պտույտները, դրանց աշխարհագրական հետևանքները: Թեմա 5՝ Աշխարհագրական թաղանթ, սահմանները, հիմնական հատկանիշները և լորտային կառուցվածքը: Թեմա 6՝ Քարոլորտ: Երկրի ռելիեֆը, հիմնական ձևերը: Լեռներ, հարթավայրեր: Թեմա 7՝ Մթնոլորտ, կազմը, կառուցվածքը: Եղանակ, կլիմա, դրանց ուսումնասիրությունների դերը սերվիսի և տուրիզմի զարգացման գործում: Թեմա 8՝ Ջրոլորտ, կազմը: Համաաշխարհային օվկիանոս, մայրցամաքային ջրեր, դրանց դերը սպասարկման և տուրիզմի գործում: Թեմա 9՝ Կենսոլորտ, կառուցվածքը: Երկրագնդի բուսական և կենդանական աշխարհը: Բնական զոնաներ: Բուսական և կենդանական աշխարհի դերը սպասարկման և տուրիզմի զարգացման ու կազմակերպման գործում: Թեմա 10՝ Մարդը և աշխարհագրական թաղանթը, փոխհարաբերությունները: Բնության և պահպանության հիմնախնդիրը:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Գաբրիելյան Հ., Երկիր մոլորակը և նրա աշխարհագրական թաղանթը, Եր., 1983: 2. Պողոսյան Վ., Ընդհանուր երկրագիտություն, Եր., 1999: 3. Մանասյան Մ.Գ., Աշխարհագրության ներածություն, Եր., 2012: 4. Максаковский В.П., Географическая картина мира. Кн.1и2.,М.:2005 5. Шукин И.С., Четырехязычный энциклопедический словарь терминов по физической географии. М., 1980 |

| | | |
|---|-----------------------------|-----------------|
| 1.0202/B21 | 2.Զբոսաշրջության հիմունքներ | 3.9 ECTS կրեդիտ |
| 4.6 ժամ/շաբ. | 5.45/0/45 | |
| 6.1-ին կիսամյակ | 7.Եզրափակիչ գնահատումով | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել մասնագիտության բովանդակությանը, խնդիրներին, ուղղություններին, ներկայացվող պահանջներին: Բացահայտվում է սոցիալ-մշակութային ծառայություններ դերը և նշանակությունը զբոսաշրջության բնագավառում: Ուսումնասիրվում են սոցիալական պայմանների գնահատումը, մշակութային ծառայությունների տեսակները, զբոսաշրջության դերը և նշանակությունը հասարակական կյանքում:</p> | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. սահմանելու և թվարկելու մասնագիտության հետ կապված հասկացությունները օրենքները, մեթոդները, 2. ներկայացնելու և մեկնաբանելու մասնագիտության տեսական և կիրառական կողմերը, 3. բացատրելու զբոսաշրջային ենթակառուցվածքների դերը զբոսաշրջության զարգացման գործում: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. համեմատելու, վերլուծելու և դասակարգելու զբոսաշրջային ծառայությունները, ենթակառուցվածքները, 2. կատարելու առաջարկություններ և կայացնելու որոշումներ, 3. մշակելու զբոսաշրջային փաթեթ, 4. կազմելու զբոսաշրջային երթուղի: <p>գ. ընդհանրական /փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կիրառելու զբոսաշրջության տեսամեթոդաբանական ապարատը, 2. հիմնավորելու կայուն զբոսաշրջության առավելությունները, 3. ռացիոնալ կերպով պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները: | | |

| |
|--|
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Ա1.պարզաբանելու զբոսաշրջության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, տեսությունները, Ա2.մեկնաբանելու զբոսաշրջության կազմակերպման սկզբունքները, մասնագիտական նորմատիվ փաստաթղթերը, Բ4.գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները:</p> |
| <p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն, 2. սեմինար պարապմունքներ, 3. դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում, 4. բանավեճ:</p> |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները. 2 ընթացիկ քննություն, ընթացիկ ստուգում և եզրափակիչ քննություն 1-ին ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով: 2-րդ ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Ընթացիկ ստուգում՝ 4 միավոր Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որից 2 հարցը՝ 3-ական միավոր, 1 հարցը՝ 2 միավոր: Միավորների քայքայ 0,5 է:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Ներածություն: Թեմա 2. Զբոսաշրջության տեսական հարցերը: Թեմա 3. Տարածքի զբոսաշրջային ռեսուրսները: Թեմա 4.Զբոսաշրջային շուկա, Թեմա 5. Զբոսաշրջության տարածքային կազմակերպումը, Թեմա 6. Զբոսաշրջության ինդուստրիան, Թեմա 7. Տուրօպերատորական և տուրգործակալական գործունեությունը, Թեմա 8. Զբոսաշրջային արտադրանք, Թեմա 9. Զբոսաշրջության կազմակերպումը և կառավարումը Թեմա10. Անվտանգության և ապահովագրության իրականացումը զբոսաշրջության ոլորտում:</p> |
| <p>14.Հիմնական գրականության ցանկը 1. Պոտոսյան Ա.Հ., Տուրիզմի հիմունքներ, Եր., 2016: 2. Кусков А., Джаладян Э., Основы туризма, Кнорус М. 2008. 3. Биржаков М., Введение в туризм, М. 2007. 4. Квартальнов В., Теория и практика туризма, М. 2003. 5. Энциклопедия туризма: справочник, Зорин И. В., Квартальнов В. А.,М. 2003. 6. Сенин В.С., Организация международного туризма М. Финансы и статистика. 2005.</p> |

| | | |
|---|--|----------------|
| 1.0304/B22 | 2.Հայ ազգագրություն | 3.3ECTS կրեդիտ |
| 4.2 Ժամ/շաբ. | 5.15/0/15 | |
| 6.2-րդ կիսամյակ | 7.Առանց ընթացիկ քննությունների գնահատման | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ներկայացնել հայոց ազգաբանության ուսումնասիրության հիմնա- խնդիրները, ճանաչողական նշանակությունը, պատմական և արդիական առումները, գիտության տեղը հայագիտության համակարգում: Բացահայտելու հայ ժողովրդի կենցաղամշակութային յուրահատկությունները, հարևան ժողովուրդների հետ ունեցած կենցաղամշակութային փոխառնչությունները, ժողովրդագրական և էթնոմշակութային պատկերը:</p> | | |

| |
|---|
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի.</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> ներկայացնելու հայերի էթնոկենցաղամշակութային առանձնահատկությունները, մեկնաբանելու կիրառելի հասկացությունները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> մեկնաբանելու հայոց մշակույթի ավանդական և ժամանակակից դրսևորումները, գնահատելու հայկական ավանդական մշակույթի դերը զբոսաշրջության մեջ, ստացած գիտելիքները կիրառելու մասնագիտական գործունեության մեջ: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> աշխատել տեղեկատվական աղբյուրների հետ, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա5. գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը և նշանակությունը:</p> <p>Բ3. կատարելու ինքնուրույն աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> դասախոսություն, սեմինար պարապմունք, դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում, տվյալների հավաքագրում և վերլուծություն, ինքնուրույն առաջադրանքի կատարում, բանավեճ |
| <p>13. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Ընթացիկ ստուգում (ներ)՝ 3 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Ինքնուրույն աշխատանք՝ 8 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 9 միավոր առավելագույն արժեքով:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Հայերն աշխարհի էթնիկ հանրությունների համակարգում. հայերի էթնոլեզվական, մարդաբանական, խառնվածքային, դավանաբանական, ժողովրդագրական բնութագիրը:</p> <p>Թեմա 2. Հայերի ավանդական և ժամանակակից արտադրական մշակույթը որպես զբոսաշրջային ռեսուրս. երկրագործություն, անասնապահություն, տնայնագործություն և արհեստ, օժանդակ տնտեսաձևեր: Թեմա 3. Հայերի կենսապահովման մշակույթը որպես զբոսաշրջային ռեսուրս. բնակավայր, բնակարան, տարազ և զարդարանք, ուտեստի համակարգ, փոխադրման և կապի միջոցներ: Թեմա 4. Հայերի սոցիոնորմատիվ մշակույթը որպես զբոսաշրջային ռեսուրս. ընտանեկան, վարվելակարգ, գյուղական համայնք, ազգակցական համակարգ, ամուսնություն և հարսանիք, որդեծնություն և մանկան դաստիարակություն, հուղարկավորություն և մեռելոց: Թեմա 5. Հայոց ավանդական և ժամանակակից հումանիտար մշակույթը որպես զբոսաշրջային ռեսուրս. ժողովրդական տոնացույց, հավատալիքներ, ժողովրդական բանավոր ստեղծագործություն, ժողովրդական երգարվեստ և պարարվեստ:</p> |

14. Հիմնական գրականության ցանկը

1. Հայ ազգագրություն, Համառոտ ուրվագիծ, Վ.Հ.Բդոյան; Խմբ.՝ Պ.Ս.Մուրադյան, Կ.Վ.Սեդրոսյան, Եր., 1974:
2. «Ազգագրական հանդես» պարբերական (I-XXVI հատորներ):
3. «Հայ ազգագրություն և բանահյուսություն» պարբերական (I-XXIV հատորներ):
4. Ազգերի և ազգային կուլտուրաների զարգացման օրինաչափությունները, Հ.Գաբրիելյան, Եր., 1973:
5. Армяне-народы и культуры-Л.М.Варданян, Г.С.Сарксян, А.Е.Тер-Саркисянц, М.: Наука, 2012-649с.
6. Народы Кавказа, том 2, изд. С.П.Толстова, М.,1962.

| 1.0201/B23. | 2.Տնտեսագիտություն | 3.6 ECTS կրեդիտ |
|---|-------------------------|-----------------|
| 4.4 ժամ/շաբ. | 5.45/0/15 | |
| 6.2-րդ կիսամյակ | 7.Եզրափակիչ գնահատումով | |
| <p>8. Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:</p> <p>Դասընթացի խնդիրները.</p> <ol style="list-style-type: none"> 1. ուսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար կատեգորիաները, օրինաչափությունները, կարգավորման սկզբունքները, ցուցանիշները: 2. ուսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները: 3. ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից, պաշտոնական վիճակագրական աղբյուրներից: 4. ուսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով: | | |
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. սահմանելու տնտեսագիտական բազային հասկացությունների, 2. ներկայացնելու սպառողների և ապրանքատերերի վարքագծերը, շուկայական մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները, տնտեսական պարբերաշրջանները, մակրոտնտեսական ցուցանիշները, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը, վճարային հաշվեկշիռն ու արժույթային կուրսերը <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. վերլուծելու տնտեսական իրավիճակներ, 2. կիրառելու տեսական գիտելիքներ, 3. հավաքագրելու, վերլուծելու տնտեսագիտական տեղեկություններ ու փաստեր, մշակելու առաջարկություններ: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. իրականացնելու տնտեսագիտական վերլուծություններ, 2. աշխատելու թիմում: 3. տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն հաղորդակցվելու հանրության հետ: | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա6. տարբերակելու զրոսաշրջության ուսումնասիրությունների առանձին, մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն),</p> <p>Բ1. իրականացնելու մարքեթինգի և մենեջմենթի վերաբերյալ վերլուծություններ՝</p> | | |

| |
|---|
| <p>զբոսաշրջության և ռեկրեացիայի ոլորտում, Բ2.Իրականացնելու զբոսաշրջային գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում, Գ1. կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն /ավանդական և ինտերակտիվ/, 2. սեմինար պարապմունքներ, 3. քննարկում /բանավեճ, 4. համագործակցային աշխատանք, 5. խոսքային կամ բանավոր մեթոդ:</p> |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները 1-ին ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա՝ 3 միավոր առավելագույն արժեքով: 2-րդ ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 3 միավոր առավելագույն արժեքով: Ինքնուրույն աշխատանք՝ 3 միավոր Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Մասնակցությունը՝ 3 միավոր:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: Թեմա 2. Տնտեսագիտության տեսության ընդհանուր խնդիրները և ելակետային հասկացությունները: Թեմա 3. Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: Թեմա4. Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: Թեմա 5. Սպառողի վարքի տեսություն: Թեմա 6. Արտադրության ծախքերի տնտեսություն: Թեմա 7. Շուկայական մոդելներ և շուկայական իշխանություն:Գնի ու արտադրության ծավալի որոշումը մրցակցային շուկաներում և շուկայական իշխանության պայմաններում: Թեմա 8. Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տեսակները և առանձնահատկությունները: Թեմա 9. Ռեսուրսների գների ձևավորումը: Թեմա 10. Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: Թեմա 11. Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: Թեմա 12. Փողը և բանկային համակարգը: Դրամավարկային քաղաքականություն:Թեմա 13.Պետական բյուջեննֆիսկալ քաղաքականությունը: Թեմա 14. Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը 1. Աղաջանյան Հովսեփ, Տնտեսագիտության տեսություն: Ուս. Ձեռնարկ, Եր., 2021, 672 էջ: 2. Սամուելսոն Ս., Նորթհանուս Ու., Տնտեսագիտություն, Եր., 1997: 3. Макконнелл К.Р., Брю С.Л, Флин Ш.М.Н.экономика. 18-ое изд., М., 2011, 1010 с. 4. Курс экономической теории. Учебник под ред. Проф.Чепурина М.Н., проф. Киселевой Е.А., М., 1999, 752 с.</p> |

| | | |
|---|--------------------------------|-----------------|
| 1.0202/B24. | 2.Ռեկրեացիայի աշխարհագրություն | 3.9 ECTS կրեդիտ |
| 4.6 ժամ/շաբ. | 5.45 /0/45 | |
| 6.2-րդ կիսամյակ | 7.Եզրափակիչ գնահատումով | |
| 8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ հանգստի սերվիսի տարածքային կազմակերպման և կառավարման տեսական գիտելիքներ: | | |
| 9.Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա.մասնագիտական գիտելիք և իմացություն 1. բացահայտելու ռեկրեացիոն գործունեության հիմնական հասկացությունները, 2. թվարկելու ռեկրեացիոն գործունեության տեսակները և հիմնավորելու ցիկլերի | | |

| |
|---|
| <p>տեսությունը,</p> <p>3. վերլուծության ենթարկելու ռեկրեացիոն ծառայությունների էությունն ու կազմակերպման առանձնահատկությունները:</p> <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>1. տարբերելու ռեկրեացիոն ինդուստրիայի՝ որպես տնտեսական գործունեության ոլորտի էությունը, կառուցվածքը, կազմակերպման առանձնահատկություններն ու տեղը տնտեսության համակարգում,</p> <p>2. զանազնելու կոնկրետ ռեկրեացիոն ծառայությունների (սանատոր-առողջարանային՝ կուրորտային, մարզական-վերականգնողական, բնակչության զանգվածային հանգիստ, ժամանց և այլն) կազմակերպման տեսական դրույթները, ունենալու դրանք գործնականում կիրառելու հմտություններ և կարողություններ:</p> <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <p>1. ստեղծելու զբոսաշրջառեկրեացիոն նախագծեր,</p> <p>2. աշխատելու թիմում:</p> |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա4. վերլուծելու զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը,</p> <p>Բ4. գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները!</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. դասախոսություն,</p> <p>2. սեմինար պարապմունք,</p> <p>3. զննական մեթոդներ,</p> <p>4. ինքնուրույն առաջադրանքի կատարում,</p> <p>5. պրոբլեմային-որոնողական մեթոդ,</p> <p>6. ինտերակտիվ-կառուցողական մեթոդ:</p> |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Նախատեսվում է</p> <ul style="list-style-type: none"> ✓ 2 ընթացիկ քննություն յուրաքանչյուրն առավելագույնը 4 միավոր, ընդամենը՝ 8 միավոր: ✓ Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 4 միավոր: ✓ Եզրափակիչ քննություն՝ առավելագույնը 8 միավոր: <p>1-ին ընթացիկ ստուգումն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>2-րդ ընթացիկ ստուգումն անցկացվում է ուսանողի գրավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Միավորների քայլը 0,5 է:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Ռեկրեացիան որպես սոցիալ-տնտեսական երևույթ: Թեմա 2. Ռեկրեացիոն աշխարհագրության առարկան, ինդիքները, ուսումնասիրման օբյեկտը, մեթոդները: Թեմա 3. Ռեկրեացիոն ռեսուրսներ: Թեմա 4. Ռեկրեացիոն պահանջարկ: Թեմա 5. Ռեկրեացիոն գործունեության կառուցվածքը, դասակարգումը, տեսակները: Թեմա 6. Ռեկրեացիոն ոլորտի տարածքային կազմակերպումը: Թեմա 7. Ռեկրեացիոն շրջանացում, աշխարհի խոշոր ռեկրեացիոն շրջանները: Թեմա 8. ՀՀ ռեկրեացիոն շրջանների բնութագիրը:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <p>1. Квартальнов В.А., Средерченко В.К., Туризм социальный. Киев.:1989.</p> <p>2. Власов А.А., Туризм. (учеб.мед.пос.). М.:1977.</p> <p>3. Мироненко Н.С., Твердохлебов И.Т., Рекреационная география. М.:1981.</p> <p>4. Азар В.И., Экономика и организация туризма. М.: 1972.</p> <p>5. Моргунов Б.П., Туризм. М.:1978г.</p> <p>6. Ананев М.А., Основы международного туризма. М.:1978.</p> <p>7. Экономика и организация международного туризма. М.:1984.</p> |

8. Гецевич Н.А., Основы экскурсоведения.(уч.пособ. для географов). Минск.:1988.
 9. Квартальнов В.А., Современные концепции социального туризма, М.1993.
 10. Биржаков М.Б. Введение в туризм, С.П. 2005.

| | | |
|--|--|-----------------|
| 1.0202/B25 | 2.Տեղեկատվական տեխնոլոգիաները զբոսաշրջության մեջ | 3.6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.30/30/0 | |
| 6.2-րդ կիսամյակ | 7.Առանց եզրափակիչ գնահատման | |
| 8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել տեղեկատվական տեղնոլոգիաների կիրառման հնարավորություններին սերվիսի և զբոսաշրջության ոլորտներում: | | |
| 9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա.մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու տեղեկատվական տեխնոլոգիաների էությունն ու հիմնական առանձնահատկությունները, 2. թվարկելու տեղեկատվական տեխնոլոգիաների տեսակները, բ. գործնական մասնագիտական կարողություններ 3. բացատրելու տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման տեսակները և ձևերը զբոսաշրջության ոլորտում գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. կիրառելու մասնագիտական համակարգչային ծրագրեր 2. կատարելու թիմային աշխատանք: | | |
| 10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Բ1. իրականացնելու զբոսաշրջային գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում, Բ2. կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, Գ8.կիրառելու SZZ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար: | | |
| 11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն, բացատրում, 2. դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում, 3. գործնական մեթոդներ, 4. բանավեճ, 5. մտազրոհ, 6. ինքնուրույն աշխատանքների կատարում: | | |
| 12. Գնահատման մեթոդները և չափանիշները. Նախատեսվում է ✓ 2 ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրն առավելագույնը 4 միավոր, ընդամենը՝ 8 միավոր: ✓ Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 8 միավոր: ✓ Ընթացիկ ստուգումներ՝ առավելագույնը՝ 4 միավոր: 1- ին ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով: 2- րդ ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0,5 է: | | |
| 13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1՝ Տեղեկատվական տեխնոլոգիաները սերվիսում դասընթացի ներածություն: Թեմա 2՝ Տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական սերվիս: Թեմա 3՝ Տեղեկատվական | | |

| |
|--|
| <p>համակարգեր: Թեմա 4՝ Գլոբալ ամրագրման համակարգեր: Թեմա 5՝ Մուլտիմեդիային տեխնոլոգիաները զբոսաշրջության ոլորտում: Թեմա 6՝ Կառավարման տեղեկատվական համակարգեր: Թեմա 7՝ Զբոսաշրջային վիրտուալ համակեցություն: Թեմա 8՝ Էլեկտրոնային կոմերցիան զբոսաշրջությունում: Թեմա 9՝ Աշխարհատեղեկատվական համակարգերը զբոսաշրջությունում: Թեմա 10՝ Տեղեկատվական համակարգերի կիրառումը հյուրանոցային համալիրի կառավարման պրոցեսում:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Հովակիմյան Ա., Սարգսյան Ս., Խաչոյան Լ., Իսախրյան Ն., Մանուկյան Ա., Մկրտչյան Ն., Համակարգչային գրագիտություն, Մեթոդական ձեռնարկ, Եր., 2012: 2. А.Тихомиров, Прокди А.К., Колосков П.В., Клендрова И.А. и др., MicrosoftOffice 2007, Наука и Техника, Эл. Книга, 2008. |

| | | |
|--|-------------------------------|------------------|
| 1.0202/B26 | 2.Հյուրընկալության ինդուստրիա | 3. 6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.30/0/30 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7.Եզրափակիչ գնահատումով | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ համակարգված գիտելիքներ հյուրընկալության ինդուստրիայի վերաբերյալ, ձևավորելու կայուն գիտելիքներ հյուրընկալության առանձին ձևերի բովանդակության, գործունեության, մեխանիզմի վերաբերյալ:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա.մասնագիտական գիտելիք և իմացություն՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու հյուրընկալությունը որպես բազմաբովանդակ գործունեություն, 2. թվարկելու հյուրընկալության ինդուստրիայի բաղադրիչները, զարգացման փուլերը, 3. հիմնավորելու հյուրընկալության բաղադրիչները ըստ առաջնահերթության: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. գնահատելու հյուրընկալության չափորոշիչները գործնականում, 2. իրականացնելու հյուրընկալության ոլորտի առանձին բաղադրիչների համակողմանի ուսումնասիրություն, 3. կիրառելու ստացած գիտելիքները հյուրընկալությունը արդյունավետ կազմակերպելու համար: <p>գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը 2. աշխատելու թիմում: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Բ4.գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները, Բ5.ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և զբոսաշրջային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա, Գ3.պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն, 2. սեմինար պարապմունք, 3. գործնական աշխատանք, 4. բանավեճ: | | |
| <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Դասընթացի գնահատման 20 միավոր առավելագույն արժեքը բաշխվում է հետևյալ սկզբունքով՝</p> <p>1- ին ընթացիկ քննություն՝ առավելագույնը 4 միավոր արժեքով</p> <p>2- րդ ընթացիկ քննություն՝ առավելագույնը 4 միավոր արժեքով</p> <p>ընթացիկ ստուգում՝ առավելագույնը 3 միավոր արժեքով</p> <p>եզրափակիչ քննություն՝ առավելագույնը 9 միավոր արժեքով:</p> | | |

| |
|---|
| Եզրափակիչ քննության հարցատումը պարունակում է 3 հարց՝ յուրաքանչյուրը 3 միավոր արժեքով: |
| 13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Հյուրընկալության ինդուստրիայի էությունը, դերն ու նշանակությունը: Թեմա 2. Հյուրընկալության ինդուստրիայի զարգացման փուլերը: Թեմա 3. Հյուրանոցային ինդուստրիա: Թեմա 4. Սննդի ինդուստրիա: Թեմա 5. Տրանսպորտային ծառայությունների դերը հյուրընկալության մեջ: |
| 14. Հիմնական գրականության ցանկը. 1. Елканова Д.И. и другие, Основы индустрии гостеприимства, Учебное пособие, М., Дашков и Ко, 2010. 2. Волков Ю.Ф., Введение в гостиничный и туристической бизнеса, Ростов 2003. 3. Корнахова В.К., Караковская Т.А., Сервисная деятельность, М. 2006. 4. Лорер Э., Сервис по королевски, Уроки ресторанного дела от Чарль Тротера, М. 2006. |

| | | |
|---|--|------------------|
| 1.0202/B27 | 2. Բնակչության աշխարհագրությունն ազգագրության հիմունքներով | 3. 6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.45/0/15 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատումով | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ բնակչության թվի, շարժի, կազմի, տեղաբաշխման, ավանդույթների ու սովորույթների, բնակավայրերի և դրանց տարածական խմբերի վերաբերյալ, ուսանողներին ծանոթացնել բնակչության աշխարհագրության վերլուծության տարբեր մեթոդներին և հիմնական հասկացություններին, ուսանողներին ծանոթացնել բնակչության աշխարհագրություն գիտության հիմունքներին, հիմնական հասկացություններին, ուսանողների մոտ ձևավորել որոշակի հմտություններ և կարողություններ բնակչության աշխարհագրության վերլուծության տարատեսակ մեթոդների և եղանակների կիրառման համար:</p> <p>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. թվարկելու բնակչության աշխարհագրության հիմնական հասկացությունները, 2. մեկնաբանելու տեսությունները և մեթոդաբանական հարցերը 3. ներկայացնելու բնակչության սոցիալական կառուցվածքը, աշխատանքային ռեսուրսները և դրանց դերը զբոսաշրջության զարգացման մեջ: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. վերլուծելու և գնահատելու բնակչության աշխարհագրության տարբեր երևույթներն ու գործընթացները, դրանց ցուցանիշները, 2. վերլուծելու բնակավայրերի և բնակչության տարածքային կազմակերպման գործոնները, սկզբունքներն ու օրինաչափությունները, 3. վերլուծելու տարաբնակեցման ժամանակակից ձևերը, զարգացման միտումները: 4. իրականացնելու տարբեր կարգի տարածաշրջանների բնակչության համալիր աշխարհագրական վերլուծություն: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. կատարելու հետազոտական աշխատանքներ ՀՀ բնակավայրերի տարածքային կազմակերպման հիմնախնդիրների շուրջ, 2. կատարելու թիմային աշխատանք:</p> | | |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները Ա5. գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը և նշանակությունը, Ա6. տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին, մոտեցումները,</p> | | |

| |
|--|
| <p>դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն), Բ5.ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և զբոսաշրջային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն, 2. սեմինար պարապմունք, 3. ինքնուրույն առաջադրանքի կատարում 4. պրոբլեմային-որոնողական մեթոդ, 5. բանավեճ: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները 1-ին ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով: 2-րդ ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Ընթացիկ ստուգում՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որից 2 հարցը՝ 3-ական միավոր, 1 հարցը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Բնակչության աշխարհագրության առարկան, մեթոդները, խնդիրները: Թեմա 2. Աշխարհի բնակչությունը, նրա հաշվառումը և շարժընթացը: Թեմա 3. Բնակչության վերարտադրությունը: Թեմա 4. Բնակչության սեռատարիքային և ընտանեկան կառուցվածքը: Թեմա 5. Բնակչության ռասայական կազմը: Թեմա 6. Բնակչության ազգային կազմը: Թեմա 7. Բնակչության սոցիալական կառուցվածքը և աշխատանքային ռեսուրսները: Թեմա 8. Բնակչության միգրացիան: Թեմա 9. Բնակչության տեղաբաշխումը: Թեմա 10. Տարաբնակեցումը և նրա ձևերը, քաղաքային և գյուղական տարաբնակեցում: Թեմա 11. Ուրբանացում:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Մանասյան Ս., Մարգարյան Ռ., Աշխարհի բնակչությունը, Եր. 2004: 2. Ковалев С., Ковальская А., География населения СССР М, 1980. 3. Перцик Е., Города мира. География мировой урбанизации. М., 1994. 4. Скопин А., Территориальная организация населения. М. 2004 5. Шувалов Е., География населения. М.1985. 6. Ягельский А., География населения. М.1980. |

| | | |
|--|--|-----------------|
| 1.0202/B28. | 2. Համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձաններ | 3.6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.30/0/30 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատումով | |
| <p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձաններին՝ ըստ պատմական-ռեգիոնալ տիպերի, ներկայացնելու տվյալ օբյեկտների նշանակությունը համամարդկային արժեքների համակարգում և կոնկրետ մշակութային շրջանակում, ներկայացնելու տվյալ օբյեկտների զբոսաշրջային ներուժը, դրանց պահպանման և օգտագործման ասպարեզում առկա խնդիրները, ձևավորել հուշարձանների վերլուծությունների մասին պատկերացում:</p> | | |

| |
|---|
| <p>9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. սահմանելու համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանների վերաբերյալ հիմնական հասկացություններն ու կատեգորիաները, 2. դասակարգելու համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանները՝ ըստ պատմական-ռեգիոնալ տիպերի, 3. նկարագրելու համաշխարհային մշակութային ժառանգության նշանավոր հուշարձանները, ներկայացնելու դրանց պահպանման գործում միջազգային կազմակերպությունների դերը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. վերլուծելու և դասակարգելու համաշխարհային մշակութային ժառանգության նշանավոր հուշարձանները, 2. գնահատելու համաշխարհային մշակութային ժառանգության նշանավոր հուշարձանները որպես զբոսաշրջային ռեսուրս: <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. իրականացնելու հետազոտական արդյունքների ամփոփում, 2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա5. գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը և նշանակությունը,</p> <p>Ա6. տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն),</p> <p>Բ4. գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները,</p> <p>Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն, 2. սեմինար պարապմունք, 3. գնական մեթոդները (դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում և այլն), 4. գործնական մեթոդները (ինքնուրույն առաջադրանքի կատարում և այլն), 5. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական-ցուցադրական, պրոբլեմային-որոնողական), 6. բանավեճ: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>1-ին ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>2-րդ ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Ընթացիկ ստուգում՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 8 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Հարցատոմսը պարունակում է 3 հարց, որից 2 հարցը՝ 3-ական միավոր, 1 հարցը՝ 2 միավոր: Միավորների քայքայը 0,5 է:</p> |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. «Համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձաններ» առարկայի ուսումնասիրության նպատակը եւ խնդիրները Թեմա 2. ՅՈՒՆԵՍԿՕ-ն որպես ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն: Դրա ստեղծման պատմությունը, նպատակը և գործունեության հիմնական ուղղությունները Թեմա 3. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոմիտեում ընդգրկված բնական և մշակութային հուշարձանների ընդհանուր բնութագիրը Թեմա 4. Եվրոպայի համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանները Թեմա 5. Ասիայի համաշխարհային մշակութային</p> |

Ժառանգության հուշարձանները Թեմա 6. Հյուսիսային Ամերիկայի համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանները Թեմա 7. Հարավային Ամերիկայի համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանները Թեմա 8. Աֆրիկայի համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանները Թեմա 9. Ավստրալիայի և Օվկիանիայի համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանները Թեմա 10. Ռուսաստանի համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանները Թեմա 11. Հայաստանի համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանները Թեմա 12. Համաշխարհային մշակութային ժառանգության հուշարձանները որպես զբոսաշրջային ռեսուրս Թեմա 13. Մշակութային ժառանգության պահպանության արդիական նշանակությունը մեր օրերում

14. Հիմնական գրականության ցանկը.

1. Вёрман К., История искусства всех времен и народов. В 2-х т. М., 2001.
2. Ю.Д.Колпинский, Памятники мирового искусства, т.1-8, М., 1971-1987
3. Дмитриева Н.А., Краткая история искусств. Вып. 2. Северное Возрождение; страны Западной Европы XVII и XVIII веков; Россия XVIII века. – 3-е изд., доп. – М., 1991.
4. Конвенция об охране всемирного культурного и природного наследия, Париж, 1972

| | | |
|---|--------------------------------------|-----------------|
| 1.0202/B29. | 2.Անվտանգությունը զբոսաշրջության մեջ | 3.6 ECTS կրեդիտ |
| 4.4 Ժամ/շաբ. | 5.45/0/15 | |
| 6.3-րդ կիսամյակ | 7. Առանց եզրափակիչ գնահատման | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել հասարակական և բնական միջավայրում մարդու կենսագործունեության անվտանգությանը, առկա ֆիզիկական, բնական, հոգեբանական վտանգներին, կանխարգելիչ միջոցառումների, անվտանգության կանոններին, որոնք առնչվում են սերվիսի ոլորտին:</p> | | |
| <p>9.Դասընթացի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. թվարկելու և դասակարգելու բնական և հասարակական միջավայրում հանդիպող վտանգները, 2. բացատրելու վտանգներից հնարավորինս զերծ մնալու ուղիները: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կանխատեսելու և դիմակայելու շրջակա միջավայրի վտանգներին, հնարավորինս արագ կողմնորոշվելու, 2. անհրաժեշտության պարագայում իվիճակի լինելու գործնականում ստացված գիտելիքները կիրառելու սերվիսի ոլորտում կամ զբոսաշրջության մեջ: <p>գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ռացիոնալ կերպով պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները, 2. աշխատելու թիմում: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա2.մեկնաբանելու զբոսաշրջության կազմակերպման սկզբունքները, մասնագիտական նորմատիվ փաստաթղթերը,</p> <p>Գ2. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն (ավանդական և ինտերակտիվ), 2. սեմինար պարապմունք, 3. գննական մեթոդները (դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում և այլն), 4. ինքնուրույն առաջադրանքի կատարում, | | |

| |
|--|
| <p>5. ճանաչողական-ստեղծագործական մեթոդներ:</p> <p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներ՝</p> <p>1-ին ընթացիկ քննություն՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>2-րդ ընթացիկ քննություն՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Ընթացիկ ստուգում՝ 6 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Ինքնուրույն աշխատանք՝ 6 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>1-ին ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>2-րդ ընթացիկ քննությունն անցկացվում է ուսանողի գրավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 4 միավոր առավելագույն արժեքով:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Զբոսաշրջության անվտանգություն, հիմնական հասկացությունները և ձևակերպումները: Թեմա 2. Զբոսաշրջության ոլորտում անվտանգության սպառնալիքները և վտանգի աղբյուրները: Թեմա 3. Տեխնածին վտանգներ, նրանց առաջացման պատճառներն ու կարիսարգելումը: Թեմա 4. Զբոսաշրջության ոլորտում անվտանգության ապահովման պետական քաղաքականությունը: Թեմա 5. Զբոսաշրջության անվտանգության իրավական հիմքերը: Թեմա 6. Զբոսաշրջության անվտանգության ապահովման ձևերը: Թեմա 7. Զբոսաշրջության անվտանգության ապահովման միջոցառումներ: Թեմա 8. Հասկացություն անձնական անվտանգության մասին: Թեմա 9. Զբոսաշրջիկների անձնական անվտանգության ապահովման առանձնահատկությունները զբոսաշրջային որոշ ծառայությունների մատուցման ժամանակ: Թեմա 10. Զբոսաշրջության անվտանգության ապահովման միջազգային ստանդարտներ: Թեմա 11. Արտասահմանյան երկրների փորձը զբոսաշրջիկների անվտանգության ապահովման ոլորտում</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Бобкова А., Кудреватых С., Писаревский Е., Безопасность туризма, Москва ,2014. 2. Маринин М.М., Туристические формальности и безопасность в туризме: Финансы и статистика, Москва, 2004. 3. Официальный сайт Foreign Affairs and International Trade Canada. URL: http://www.voyage.gc.ca/countries_pays/report_rapport-eng.asp?id=249000. 2. Официальный сайт HOTREC. URL: http://www.hotelstars.org. 4. Вайзман Д., «Руководство по выживанию», Москва , 2002. |

| | | |
|---|-----------------------------------|-----------------|
| 1.0202/B30 | 2.Զբոսաշրջության աշխարհագրություն | 3.9 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.45/0/45 | |
| 6.4-րդ կիսամյակ | 7.Եզրափակիչ գնահատումով | |
| <p>8.Դասընթացի նպատակն է ձևավորել և զարգացնել աշխարհի տարածաշրջաններում և երկրներում զբոսաշրջության զարգացման օրենքները հասկանալու և այդ գիտելիքները մասնագիտական գործունեության մեջ օգտագործելու կարողունակություններ:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. Ներկայացնել զբոսաշրջության զարգացման վրա աշխարհագրական գործոնների ազդեցության առանձնահատկությունները, 2. Ներկայացնել շրջանացման հիմունքները, 3. բացատրել տուրիստական խոշոր շրջաններում զբոսաշրջային ռեսուրսների տեղաբաշխման հիմնական օրինաչափությունները, 4. ներկայացնել զբոսաշրջային խոշոր կենտրոնների աշխարհագրությունը և դրանց զբոսաշրջային ենթակառուցվածքների առանձնահատկությունները, 5. իմանալ տարածաշրջանային ուսումնասիրությունների, տուրիստական ռեսուրսների աշխարհագրության և տարածաշրջանային ուսումնասիրությունների վերաբերյալ | | |

| |
|---|
| <p>տեղեկատու և տեղեկատվական նյութերի հետ աշխատանքի մեթոդիկան:</p> <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. գնահատել աշխարհագրական գործոնների ազդեցությունը զբոսաշրջության զարգացման վրա աշխարհի տարբեր տարածաշրջաններում, 2. աշխատել երկրի ուսումնասիրությունների, զբոսաշրջության ռեսուրսների աշխարհագրության և կրոնագիտության, զբոսաշրջության ռեսուրսների աշխարհագրության և կրոնագիտության վերաբերյալ տեղեկատու և տեղեկատվական նյութերի հետ. 3. հավաքել տեղեկատվություն զբոսաշրջային արդի կենտրոնների ենթակառուցվածքի, տեսարժան վայրերի, սահմանների հատման կանոնների և աշխարհի տարբեր շրջաններում զբոսաշրջության կազմակերպման առանձնահատկությունների մասին 4. կատարելու երկրագրության առանձին բաղադրիչների գնահատում տուրիստական հնարավորությունների օգտագործման և տուրիզմի զարգացման տեսանկյունից, <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. փաստերի վերլուծության հիման վրա կատարելու եզրահանգումներ և ընդհանրացումներ, 2. աշխատելու թիմում 3. ընդհանրացնել զբոսաշրջության վերաբերյալ տեղեկատվությունը 4. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, լուծել խնդիրներ: |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա6. տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին, մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն),</p> <p>Բ3. կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման կուրսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. խոսքային մեթոդներ, 2. լսարանային ցուցադրություններ, 3. գործնական մեթոդներ, 4. պրոբլեմային-որոնողական մեթոդ, 5. հետազոտական մեթոդ, 6. բանավեճ: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>2 ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրն առավելագույնը 4 միավոր, ընդամենը՝ 8 միավոր:</p> <p>Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 4 միավոր:</p> <p>Եզրափակիչ քննություն՝ առավելագույնը 8 միավոր:</p> |

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.
 Թեմա 1. Զբոսաշրջության աշխարհագրությունը որպես գիտություն. օբյեկտը, առարկան, խնդիրները, կապն այլ գիտությունների հետ: Դասընթացի հիմնական հասկացությունները: Թեմա 2. Զբոսաշրջության տարածքային զարգացման վրա ազդող գործոնները: Թեմա 3. Տարածքի զբոսաշրջա-ռեկրեացիոն պոտենցիալը և դրա գնահատման մեթոդները: Թեմա 4. Զբոսաշրջության աշխարհագրության հետազոտությունների ժամանակակից մեթոդները: Թեմա 5. Տուրիստական երկրագրության վերլուծության սխեմաները: Թեմա 6. Տուրիստական երկրագրությունը և տուրիզմը: Թեմա 7. Տուրիստական երկրագրական հիմնական բաղադրիչները /աշխարհագրական դիրք, բնություն՝ մակերևույթ, կլիմա, ջրեր, բնական զոնաներ, երկրի պատմությունը, բնակչություն, մշակույթ, արվեստ, տնտեսություն, ավանդույթներն այլն/, դրանց տուրիստական հնարավորությունների գնահատումը: Թեմա 8 . Աշխարհի զբոսաշրջային հոսքերի աշխարհագրությունը: Թեմա 9. Զբոսաշրջա-ռեկրեացիոն շրջանացում և շրջաններ: Թեմա 10. Զբոսաշրջության զարգացումն աշխարհի տարածաշրջաններում և երկրներում, կայուն տուրիզմը դրանցում: Թեմա 11. Զբոսաշրջության տարածքային կազմակերպման ժամանակակից ձևերը: Թեմա 12. Տարածքը և շրջակա միջավայրը:

14. Հիմնական գրականության ցանկը

1. Գրիգորյան Վ., Հովհաննիսյան Գ., Սամվելյան Ն. Զբոսաշրջության աշխարհագրություն, Եր. 2021 թ., 370 էջ
2. Վալեսյան Լ., Հասարակական աշխարհագրության ներածություն, Եր. 1999 թ.
3. Ալեքսանյան Գ.Փ., Սերվիսի հետազոտության մեթոդները, ուս. ձեռնարկ, Եր. 2018թ.
4. Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները. մեթոդական ցուցումներ /Հովհաննիսյան Գ., Գալստյան Ն., Սողոմոնյան Մ., Մալխասյան Մ.: - Երևան: ԵՊՀ հրատ., 2014. - 72 էջ:
5. Большаник П.В. Туристское страноведение, М., 2017
6. Лагутина М.Л. Мир регионов в мировой системе XXI века., СПб., 2016 300с
7. Кружалин В.И. География туризма М., 2014. — 336 с.
8. Крыстев В.К., Адамова Р.А. Учебно-методический комплекс по дисциплине «География туризма», М., 2013-202с.
9. Самарина И.А. Учебно-методический комплекс дисциплины «География туризма», Пушкино – 2012-13с
10. Ердаветов С.Р. География туризма. Алматы., М., 2000. — 329 с.
11. Кузык С.П. География туризма. Киев., 2011- 271с.
12. Ковынева Л. В. Региональный туризм. Хабаровск., 2005. – 111 с.
13. Зорин И.В., Квартальнов В.А. Туристский терминологический словарь.- М;изд «Советский спорт»
14. Сапожникова Е.Н. Страноведение. Теория и методика туристского изучения стран., М. 2004. 240с

| | | |
|--|---|-----------------|
| 1.0202/B31 | 2. "ՀԲ" Զբոսաշրջության հետազոտության մեթոդներ | 3.6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.30/0/30 | |
| 6.4-րդ կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատումով | |
| 8. Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել զբոսաշրջության ոլորտում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդաբանությանն ու մեթոդներին և սովորեցնել ինքնուրույն ուսումնասիրություններ կատարելու հնարները: | | |
| 9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. վերարտադրելու գիտահետազոտական աշխատանքներ կատարելու մեթոդաբանությունը, | | |

| |
|---|
| <p>2. թվարկելու զբոսաշրջության ոլորտում հետազոտական աշխատանքներ կատարելու համար կիրառավոր մեթոդները,</p> <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>1. օգտագործելու համագիտական և նեղ գիտական մեթոդներ մասնագիտական կիրառական վերլուծություններ և ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար,</p> <p>2. մասնագիտորեն վերլուծելու և գնահատելու զբոսաշրջության ոլորտը,</p> <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <p>1. փաստերի վերլուծության հիման վրա կատարելու եզրահանգումներ և ընդհանրացումներ,</p> <p>2. աշխատելու թիմում</p> |
| <p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա6. տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին, մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն),</p> <p>Բ3. կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,</p> <p>Գ1. Կիրառելու սոցիալ-աշխարհագրական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման ևուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. խոսքային մեթոդներ,</p> <p>2. լսարանային ցուցադրություններ,</p> <p>3. գործնական մեթոդներ,</p> <p>4. պրոբլեմային-որոնողական մեթոդ,</p> <p>5. հետազոտական մեթոդ,</p> <p>6. բանավեճ:</p> |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <ul style="list-style-type: none"> ✓ 2 ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրն առավելագույնը 4 միավոր, ընդամենը՝ 8 միավոր: ✓ Ընթացիկ ստուգում՝ առավելագույնը 4 միավոր: ✓ Եզրափակիչ քննություն՝ առավելագույնը՝ 8 միավոր: |
| <p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Զբոսաշրջության հետազոտության մեթոդներ դասընթացի ներածություն Թեմա 2. Զբոսաշրջության հետազոտության տեսա-մեթոդաբանական շրջանակները: Թեմա 3. Զբոսաշրջության հետազոտություններում կիրառվող համագիտական էմպիրիկ մեթոդներ (դիտարկման, գիտափորձի, համեմատման, համանմանության, չափման, նկարագրման): Թեմա 4. Զբոսաշրջության հետազոտություններում կիրառվող համագիտական տեսական մեթոդներ (պատմական, համակարգային մոտեցման, մոդելավորման, մաթեմատիկական, վերլուծության, համադրման): Թեմա 4. Զբոսաշրջության հետազոտություններում կիրառվող ինֆորմացիայի ստացման կոնկրետ (մասնավոր) գիտական և միջգիտական մեթոդներ (հարցումների, քարտեզագրման, վիճակագրական): Թեմա 5. Զբոսաշրջության հետազոտություններում ստացված ինֆորմացիայի մշակման մեթոդներ (դասակարգման, գնահատման, գրաֆիկական, SWOT վերլուծության): Թեմա 6. Հետազոտական աշխատանքների կատարմանը ներկայացվող պահանջները (ըստ նորմատիվային և կանոնակարգիչ փաստաթղթերի): Թեմա 7. Հետազոտական աշխատանքների ներկայացման ձևերը: Ցուցադրության ներկայացման կանոնները:</p> |
| <p>1. Հիմնական գրականության ցանկը</p> <p>1. Վալեսյան Լ.Հ., Աշխարհագրական գիտությունների մեթոդաբանական և տեսական հիմունքները, Եր. 2004 թ.</p> <p>2. Վալեսյան Լ.Հ., Աշխարհագրության ներածություն, Եր. 1999 թ.</p> <p>3. Ալեքսանյան Գ.Փ., Մերվիսի հետազոտության մեթոդները, ուս. Ձեռնարկ, Եր. 2018թ.</p> <p>4. Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները.</p> |

մեթոդական ցուցումներ /ՀովհաննիսյանԳ., ԳալստյանՆ., ՍողոմոնյանՄ., ՄալխասյանՄ.: - Երևան: ԵՊՀ հրատ., 2014. - 72 էջ:

5. Ղազարյան Ա. Գիտական հետազոտության մեթոդաբանական առանձնահատկությունները, Ե., 2015 112 էջ
6. Հովհաննիսյան Հ. Ինչպես գրել գիտական աշխատանք պատմությունից, Ե., 2014 64 էջ
7. Баскаков А.Я., Туленков Н.В., Методология научного исследования, К., МАУП, 2004
8. Кузин Ф.А. Магистерская диссертация. Методика написания, правила оформления и процедура защиты. М., 1999 304с.
9. ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ համապատասխան կարգեր

| | | |
|---|--|-----------------|
| 1.0202/B32. | 2.Գործարար շփումների էթիկա | 3.6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.45/15/0 | |
| 6.4-րդ կիսամյակ | 7.Առանց ընթացիկ քննությունների գնահատման | |
| 8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել զբոսաշրջության մասնագիտական և ընդհանրապես գործարար շփումների էթիկային և սովորեցնել գործնական շփման հմտություններ: | | |
| 9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա.մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու զբոսաշրջության և այլ ոլորտներում էթիկայի դրսևորման ձևերը, գործնական պահվածքի կանոններն ու մոդելները, 2. թվարկելու սերվիսային գործունեության մշակույթի առանձնահատկությունները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. իրեն մասնագիտորեն դրսևորելու զբոսաշրջային և հարակից բիզնես միջավայրերում, 2. գործնականում կիրառելու զբոսաշրջիկների հետ փոխհարաբերությունների կանոնները, արդյունավետ ղեկավարելու զբոսաշրջային ձեռնարկություն: գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. մասնագիտական էթիկայի նորմերը պահպանելու: | | |
| 10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Բ5.ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և զբոսաշրջային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա, Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: | | |
| 11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություն, 2. սեմինար պարապմունք, 3. դիդակտիկ նյութերի ցուցադրում, դիտում, 4. գործնական մեթոդներ, 5. բանավեճ: | | |
| 12.Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները Դասընթացի գնահատման 20 միավոր առավելագույն արժեքը բաշխվում է հետևյալ սկզբունքով՝ ինքնուրույն աշխատանք՝ 8 միավոր ընթացիկ ստուգում՝ 3 միավոր Եզրափակիչ քննություն՝ 9 միավոր: Եզրափակիչ քննության հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ յուրաքանչյուրը 3 միավոր արժեքով: | | |
| 13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Դասընթացի ներածություն: Էթիկան որպես գիտություն: Թեմա 2. Գործարար էթիկայի հիմունքները որպես էթիկայի առանձին տեսակ: Թեմա 3. Հաղորդակցման էությունը, տեսակները, դերը, բնույթը և դասակարգումը: Թեմա 4. Մարդկային հաղորդակցության | | |

| |
|---|
| <p>առանձնահատկությունները: Թեմա 5. Միջանձնային շփումը, դրա տեսակները և գործառույթները: Թեմա 6. Սերվիսային գործունեության մասնագիտական-էթիկական բաղադրիչը: Թեմա 7. Դիվանագիտական էթիկա: Բանակցելու արվեստը: Թեմա 8. Լրագրողական էթիկա: Թեմա 9. Մեդիագրագիտություն: Համացանցային (հեռահաղորդակցական) էթիկա: Թեմա 10. Կոնֆլիկտները և դրանց լուծման ուղիները: Թեմա 11. Միջմշակութային հաղորդակցության առանձնահատկությունները:</p> |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Гембель П., Маркетинг взаимоотношение потребителем. М., 2002. 2. Ханвер К., Управление и организации в сфере услуг, Питер, 2002. 3. Иленков А.П., Специфики и направления сервисном продуктами. М., 2000. 4. Գավին Քենեդի, Ինչպես բանակցել. Եր., 2009: |

| | | |
|---|--|-----------------|
| 1.0304/B33. | 2.Թանգարանագիտություն | 3.3 ECTS կրեդիտ |
| 4.2 ժամ/շաբ. | 5.15/0/15 | |
| 6.5-րդ կիսամյակ | 7.Առանց ընթացիկ քննությունների գնահատման | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողին հաղորդել տեսական գիտելիքներ թանգարանագիտության վերաբերյալ, ներկայացնել թանգարանագիտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան, թանգարանագիտական հիմնական հասակացությունները, թանգարանների գործունեությունը:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝</p> <p>ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու թանգարանների ձևավորման պատմությունը, 2. ներկայացնելու ժամանակակից թանգարանները և դրանց դերը զբոսաշրջության մեջ, 3. մեկնաբանելու թանգարանների գործունեությունը մշակութային արժեքների հավաքման, պահպանման, հասարակությանը հաղորդակից դարձնելու և սերունդներին փոխանցելու գործում, 4. ներկայացնելու թանգարանային գործում կիրառելի հասկացությունները 5. ներկայացնելու թանգարանային գործի կազմակերպումը: <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կողմնորոշվելու թանգարանային բազմազանության մեջ, 2. կիրառելու թանգարանային միջավայրում գործնական հմտություններ 3. օգտագործելու նորագույն տեխնոլոգիաներ ու մեթոդներ, 4. ստացած գիտելիքները կիրառելու մասնագիտական գործունեության մեջ, <p>գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. ձևավորելու մշակութային և պատմական հիշողություն 2. աշխատելու տեղեկատվական աղբյուրների հետ: | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա5.գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, հնագիտական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը և նշանակությունը, Բ3. կատարելու ինքնուրույն աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:</p> <p>Բ4.գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները,</p> <p>Գ2. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպել և լուծել խնդիրներ:</p> <p>Գ4. կատարելու թիմային աշխատանք:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություններ դիդակտիկ նյութերի ցուցադրմամբ, 2. տեսանյութերի դիտում, 3. տվյալների հավաքագրում և վերլուծություն, 4. ինքնուրույն առաջադրանքի կատարում, | | |

| |
|--|
| 5. տեսասահիկների ստեղծում, 6. փոքր խմբային նախագիծ: |
| 12. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Թանգարանագիտությունը որպես գիտություն, ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Թեմա 2. Թանգարանների ձևավորման պատմությունը: Թեմա 3. Թանգարանների դասակարգումը: Թեմա 4. Թանգարանի կառավարում: Թեմա 5. Թանգարանի աշխատակազմը և նրանց մասնագիտական վարքագիծը: Թեմա 6. Թանգարանային ֆոնդեր, թանգարանային հավաքածուների համալրում և պահպանում: Թեմա 7. Այցելուների սպասարկում, առաջարկվող ծրագրեր, գովազդ և հասարակության հետ կապեր: Թեմա 8. Նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառությունը թանգարաններում: |
| 13. Գնահատման մեթոդները և չափանիշները Ընթացիկ ստուգում (ներ)՝ 3 միավոր առավելագույն արժեքով: Ինքնուրույն աշխատանք՝ 8 միավոր առավելագույն արժեքով: Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 9 միավոր առավելագույն արժեքով: |
| 14. Հիմնական գրականության ցանկը 1. Պիկիչյան Հ., Հարոյան Ս., Գրիգորյան Ա., Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ, Էդիտայրինտ, Եր., 2007: 2. «Ժառանգություն» հասարակական կազմակերպություն, ԻԿՕՍ-ի մասնագիտական վարքագծի կանոնագիրք, Եր. 2003: 3. Юренева Т., Музееведение: Учебник для студентов гуманитарных вузов Академический проект, М. 2004, 4. Шляхтина Л., Основы музейного дела: теория и практика. (Учебное пособие для студ.вузов), Высшая школа М. 2009 5. Сотникова С., Музеология,. Пособие для ВУЗов Дрофа, М. 2007 3. Ред. Шулепова Э, Основы музееведения., Учебное пособие Эдиториал УРСС М., 2005. |

| | | |
|---|----------------------------|-----------------|
| 1.0201/В34. | 2.Զբոսաշրջության մենեջմենթ | 3.6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.30/30/0 | |
| 6.5-րդ կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատումով | |
| 8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողների մեջ ձևավորել տեսական գիտելիքներ մենեջմենթի համակարգի վերաբերյալ, ինչպես նաև հմտություններ և կարողություններ զբոսաշրջության ոլորտի հիմնախնդիրների արդյունավետ կառավարման համար: | | |
| 9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ներկայացնելու կառավարման էությունը, դրա ոլորտները, ձևերն ու գործիքները, 2. ներկայացնելու զբոսաշրջային ձեռնարկությունների կառավարման նպատակները, դրանց առանձնահատկությունները և խնդիրները, 3. բացատրելու և հիմնավորելու մենեջմենթի արդյունավետ կազմակերպման ժամանակակից մոտեցումները: բ. գործնական մասնագիտական կարողություններ 1. կիրառելու աշխատանքի կազմակերպման վերաբերյալ գիտելիքները սոցիալ-մշակութային ծառայության և զբոսաշրջության ոլորտներում, 2. տիրապետելու կառավարման մեթոդներին, սկզբունքներին և տեխնոլոգիաներին, 3. մշակելու կազմակերպչական և կառավարչական ռացիոնալ արդյունավետ որոշումների համակարգ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. վերլուծելու ՀՀ զբոսաշրջային շուկայում գործող ձեռնարկությունների առանձնահատկությունները, զարգացման միտումները, 2. ներդնելու զբոսաշրջության կառավարման ինովացիոն մոտեցումներ, | | |

| | | |
|---|--|--|
| <p>3. աշխատելու թիմում և արդյունավետ օգտագործելու սեփական գիտելիքները՝ թիմային արդյունքի հասնելու նպատակով:</p> | | |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները. Ա2.մեկնաբանելու զբոսաշրջության կազմակերպման սկզբունքները, մասնագիտական նորմատիվ փաստաթղթերը, Բ1.իրականացնելու մարքեթինգի և մենեջմենթի վերաբերյալ վերլուծություններ՝ զբոսաշրջության և ռեկրեացիայի ոլորտում, Բ2.իրականացնելու տուրիստական գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում, Գ3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> | | |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն, բացատրում, պատմում, 2. սեմինար պարապմունք, 3. թիմային և անհատական ինքնուրույն առաջադրանքների կատարում, 4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդներ, 5. բանավեճ: | | |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <ul style="list-style-type: none"> ✓ 2 ընթացիկ քննություն՝ յուրաքանչյուրն առավելագույնը 4 միավոր, ընդամենը՝ 8 միավոր: ✓ Ինքնուրույն աշխատանք՝ առավելագույնը 4 միավոր: ✓ Եզրափակիչ քննություն՝ առավելագույնը 8 միավոր: | | |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Շուկայական տնտեսությունը և մենեջմենթը: Թեմա 2.Զբոսաշրջության ոլորտում բիզնեսի ներքին և արտաքին միջավայրը: Թեմա 3 Զբոսաշրջային ձեռնարկությունների կառավարման նպատակները և խնդիրները: Թեմա 4 Մենեջմենթի գործառույթները զբոսաշրջության ոլորտում :Թեմա 5 Մարքեթինգը զբոսաշրջության ոլորտում : Թեմա 6. Հաղորդակցությունների համակարգը զբոսաշրջային ձեռնարկություններում: Թեմա 7. Արտաքին կապերը և մենեջմենթի հնարավորությունները զբոսաշրջության ոլորտում: Թեմա 8. Որակը և մենեջերի աշխատանքը: Թեմա 9.Զբոսաշրջության ոլորտում որոշումների ընդունման մեթոդները: Թեմա 10. Կոնֆլիկտների կառավարումը զբոսաշրջության ոլորտում: Թեմա 11.Մենեջերի ինովացիոն ծրագիրը: Թեմա 12.Կառավարման ինֆորմացիոն տեխնոլոգիաները զբոսաշրջության ոլորտում: Թեմա 13. Ռիսկ-մենեջմենթ: Թեմա 14 Հակաճգնաժամային կառավարումը զբոսաշրջության ոլորտում:</p> | | |
| <p>14. Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Уткин Э.А., Бутова Т.Б. Менеджмент. М., 2002. 2. Менеджмент социальной работы. Учебное пособие. Под ред. Е.И.Комарова, А.И.Войтенко, М.,2001. 3. Медведева Г., Этика социальной работы. Учебное пособие, М.,2002. 4. Саак А., Менеджмент в социально-культурном сервисе и туризме. Учебное пособие, М., 2006. | | |

| | | |
|---|-----------------------------------|-----------------|
| 1.0202/B35. | 2."ՀԲ" Հայաստանի աշխարհագրություն | 3.9 ECTS կրեդիտ |
| 4.6 ժամ/շաբ. | 5.45/0/45 | |
| 6.5-րդ կիսամյակ | 7.Եզրափակիչ գնահատումով | |
| <p>8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ Հայաստանի Հանրապետության բնական պայմանների, ռեսուրսների, բնակչության, տնտեսության (արտադրական և սերվիսի) ոլորտների տարածքային կազմակերպման և կառավարման մասին տեսական ու գործնական գիտելիքներ:</p> | | |
| <p>9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝ ա.մասնագիտական գիտելիք և իմացություն</p> | | |

| |
|--|
| <ol style="list-style-type: none"> 1. բացատրելու ՀՀ բնական պայմանները, 2. թվարկելու և դասակարգելու ՀՀ ռեսուրսները, 3. ներկայացնելու ՀՀ արդյունաբերության, գյուղատնտեսության և սերվիսի տարածքային կառուցվածքը, 4. պարզաբանելու ՀՀ առանձին տարածաշրջանների տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքը, հիմնախնդիրները և զարգացման միտումները, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. պարզաբանելու ՀՀ-ում առկա հիմնախնդիրները և տալու լուծման ուղղիներ, 2. վերլուծելու և գնահատելու ՀՀ բնական պայմանները, ռեսուրսները և տալ դրանց գնահատականը զբոսաշրջության տեսանկյունից, 3. կատարելու հետազոտական աշխատանքներ ՀՀ տնտեսության զարգացման, տեղաբաշխման հիմնախնդիրներ շուրջ, <p>գ.ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. դրսևորելու քննադատական մտածողություն: |
| <p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջարդյունքները.</p> <p>Ա3.Բացահայտելու զբոսաշրջության առանձնահատկությունները և զարգացումները տարածաշրջանային ու տեղական մակարդակներում,</p> <p>Ա5.Գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը և նշանակությունը,</p> <p>Բ4.Գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները:</p> |
| <p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն, 2. սեմինար պարապմունք, 3. գննական մեթոդներ, 4. ինքնուրույն առաջադրանքի կատարում, 5. ճանաչողական-ստեղծագործական մեթոդներ, 6. բանավեճ: |
| <p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները</p> <p>Նախատեսված են 2 ընթացիկ քննություններ՝ յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>1-ին ընթացիկ քննությունը գրավոր է: Միավորների քայլը 0,5 է:</p> <p>2-րդ ընթացիկ քննությունը հետազոտական աշխատանքի պաշտպանությունն է:</p> <p>Ընթացիկ ստուգում 3 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 9 միավոր առավելագույն արժեքով:</p> |
| <p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. ՀՀ տարածքը, սահմանները, աշխարհագրական դիրքը, վարչատարածքային կառուցվածքը: ՀՀ բնական պայմանները և ռեսուրսները: Թեմա 2. Հայաստանի արտադրողական ուժերի զարգացման պատմաաշխարհագրական առանձնահատկությունները: Թեմա 3. Հանրապետության բնական, տնտեսական և սերվիսի ներուժի գնահատա-կանը, բնօգտագործման և բնապահպանության խնդիրները: Թեմա 4. Բնակչությունը:Հայերը աշխարհում: Թեմա 5. Տնտեսությունը: Արդյունաբերության, գյուղատնտեսությունը և սերվիսի տարածքային կառուցվածքը: Թեմա 6. ՀՀ սպասարկման ոլորտը, զարգացման միտումները: Թեմա 7. Հանրապետության սպասարկման ոլորտում տարածքային կառուցվածքի փոփոխությունները վերակառուցման և շուկայական հարաբերությունների պայմաններում: Թեմա 8. ՀՀ-ն միջազգային տրիզմի հարաբերություններում: Հայաստանի տնտեսությունը համաաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում: Թեմա 9. ՀՀ մարզերի համառոտ բնութագիրը:</p> |
| <p>14.Հիմնական գրականության ցանկը</p> <ol style="list-style-type: none"> 1. Պոտոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր.,2022! |

2. Վալեսյան Լ., Հայկական ՄՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր. 1988:
 3. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 2007:
 4. Մակարյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., 2002:
 5. Հայկական ՄՍՀ աշխարհագրական ատլաս, Մ., 1976:
 6. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Եր. 1979:

| | | |
|--|--------------------------|-----------------|
| 1.0202/B36. | 2."ՀԲ" էքսկուրսիոն գործ | 3.6 ECTS կրեդիտ |
| 4.4 ժամ/շաբ. | 5.45/15/0 | |
| 6.5-րդ կիսամյակ | 7. Եզրափակիչ գնահատումով | |
| 8.Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին համակարգված գիտելիքներ տալ էքսկուրսիոն գործի վերաբերյալ:Կարողություններ ձևավորել էքսկուրսիաների կազմակերպման և իրականացման համար: | | |
